ԹԱՀԵՆ ՄԱՐՏՅԱՆ

ԱՐՑԱԽ

ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՑԱԽ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ



«ԴԻԶԱԿ», Երևան, 1991 թ.

Ադրբեջանական ժամանակակից քարտեզ



Մասնագետ խմբագիրներ՝
ՀՀ ԳԱ ակադեմիկոս Բ. ԱՒԱԳԵԼՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր
Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ Շ.

Արցախ, Եր., «Արցախական», 1991, 112 էջ։

Շ. Մկրտչյանը գիտական աշխարհին հայտնի է Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանների մասին մի շարք արժեքավոր ուսումնասիրություններով։

Սույն գրքույկը համառոտ ներկայացնում է Արցախի պատմական ու մշակութային զարգացման ճանապարհը՝ որպես հայ ժողովրդի հազարամյա գոյատևման անբաժան մասը, երկրամասի կյանքի հին ու նոր իրադարձությունները, ողբերգականն ու հերոսականը, նաև՝ նրան պարտադրված վերջին յոթանասունամյակի անմարդկային ճակատագիրը։

$$\text{Մ}\frac{4900000000}{701(01)85}$$ ISBN *5—540,01 468—5*

© Շ. Մկրտչյան, 1991

Նվիրվում է Արցախի ազատագրման համար զոհված հայրենակիցներիս պայծառ հիշատակին։

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հին և միջնադարյան Հայաստանի տասներորդ նահանգը՝ պատմական Արցախը, որ տարբեր դարաշրջաններում կոչվել է նաև **Փոքր Սյունիք, Խաչեն, Ղարաբաղ,** ֆիզիկաաշխարհագրական առումով ավելի լայն հասկացություն է, քան **Լեռնային Ղարաբաղը։ Արցախն,** անշուշտ, ավելի ընդարձակ էր և զբաղեցնում էր **Փոքր Կովկասի** հարավարևելյան ամբողջ տարածքը, իր մեջ ընդգրկելով Մուխանք-Մուղանի դաշտավայրի զգալի մասը։ Նրա սահմաններն արևմուտքից ձգվում էին Սևանա լճի արևելյան ափով, հարավ-արևմուտքից՝ Աղվանո (Հագարի) գետով, հարավից՝ Երասխի (Արաքսի) հովտով մինչև Մուխանքի տափաստանը, իսկ հյուսիս-արևելքից սահմանակից էր հայկական Ուտիք[1] նահանգին։

[1] *Ուտիքը ըստ VII դ. հայոց «Աշխարհացույցի» Մեծ Հայքի 12-րդ նահանգն էր, ուներ ութ գավառ, գտնվում էր Արաքս գետից արևմուտք, Արցախի և Կուր գետի միջև։ Նրա գավառներն էին* Արան-Ռոտ, Տոի, Ռոտ-Գարայան, Աղուե, Տուս, Քուստակ (Տաուշ), Գարդման, Շակաշեն *և* Ուտի-Առանձնակ։

Վարչատարածքային առումով Արցախը բաժանված է եղել 12 (իսկ որոշ ժամանակներում՝ 14) գավառի՝ շրջանի: Ահա դրանք. **Մյուս Հաբանդ (Սիսական-ի-Ռստակ), Հարճլանք-Վարդանակերտ, Մուխանք, Պարզկանք, Պիանք, Մեծ Իրանք կամ Մեծ Առանք, Վայկունիք կամ Ծառ, Բերդաձոր, Կողթ, Փառնես, Քուստի և Մեծ Կվենք:**

Լեռնաշղթաներն ու լեռնաբազուկներն իրարից բաժանվում են անդնդախոր, գեղատեսիլ հովիտներով, արևմուտքից դեպի արևելք, հյուսիսից հարավ հոսող 140-ից ավելի գետերով ու գետակներով, որոնք թափվում են Կուր և Արաքս գետերը:

Լեռնային **Արցախը** հարուստ է հանքային հանածոներով և բուժիչ ջրերով: Հայտնի են գունավոր մետաղների (այդ թվում նաև ոսկի, արծաթ), երկաթի, պիրիտի, գրանիտի, մարմարի, տուֆի, վիմաքարի, իսլանդական շպատի, հանքային ներկերի, քարածխի հանքավայրերը:

Արցախի կլիման ընդհանուր առմամբ մեղմ է, թեպետ մեծ բարձրություններում և ցածրադիր հարթություններում այն խիստ փոփոխական է: Այսպես, եթե տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 18,3 աստիճան, ամենացուրտ ամսին՝ հունվարին՝ 1,1, ամենատաք ամսին՝ հուլիսին՝ 25,2 աստիճան, ապա լեռնային և տափաստանային գոտիներում համապատասխանաբար՝ —2,3, 2,4 (հունվար), 19,6, 33,4 (հուլիս) աստիճան է:

Տարեկան միջին տեղումների քանակը կազմում է 568 մմ:

Ամբողջ տարածքի 40 տոկոսը զբաղեցնում են անտառները, որոնց բնորոշ է ծառատեսակների բազմազանությունը: Բուսատեսակներից շատերը պարունակում են սննդային, եթերաձիթային, ներկերի, վիտամինային ու դեղամիջոցային բաղադրություններ և ունեն լայն կիրառություն:

«Ղարաբաղի բուսական աշխարհի վերլուծությունն ստիպում է մտածել,— գրել է բուսաբան Վ. Ա. Պետրովը,— **որ սկզբնական շրջանում մարդն այստեղ ընդհարվել է անտառների համատարած զանգվածների հետ: Սննդային կիրառություն ունեցող վայրի բուսատեսակների օգտագործումն առաջացել է ոչ միայն տնտեսական, այլև բնապատմական պայմանների դրդումով»**[2]: Այդ պատճառով էլ պատմական աղբյուրներում Արցախը հաճախ է հիշվում **«Մայրաստանիկ Արձախ», «թանձրախիտ մայրիսն Արձախոյ»** և այլն:

Լեռնոտ երկրամասի բնակլիմայական վիճակը՝ վայրի պտուղներով հարուստ անտառները, հացազգի ու թիթեռնազգի քաղցրահամ խոտածածկը նպաստավոր պայման են հանդիսացել կենդանական աշխարհի տեսակների բազմազանության համար:

Հնագույն ժամանակներից Արցախ-Ղարաբաղի բնակչությունը զբաղվում է երկրագործությամբ,

2 **В. Петров**, Этноботаника Нагорного Карабаха. Баку. 1940, с. 17.

անասնապահությամբ և շերամապահությամբ: Ամբողջ արևելքում հայտնի էին Արցախում բուծվող ձիերը, որոնք աչքի էին ընկնում դիմացկունությամբ և արագավազությամբ:

Այժմյան **Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ)** զբաղեցնում է պատմական Արցախի միայն հարավային հատվածը, մոտավորապես նրա 1/3 մասը: Նրա տարածքի հյուսիս-արևմտյան երկայնքով ձգվում է Ղարաբաղի լեռնաշղթան, որից դեպի արևելք ճյուղավորվում են մի շարք լեռնաբազուկներ: Վերջիններս, մարզի արևելյան սահմաններում ցածրանալով, միանում են Ղարաբաղի կամ Մուղանի (հին Մուխանքի) տափաստանի հետ: Մարզի տարածքը հյուսիսից հարում է Մոով լեռնաշղթային, որի ամենաբարձր գագաթը գտնվում է ծովի մակերևույթից 3724 մ բարձրության վրա:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը 4388 քառակուսի կիլոմետր է, բնակչությունը (1989-ի համամիութենական մարդահամարի տվյալներով)՝ 188 հազար մարդ: Բնակչության գերակշռող մասը (80 տոկոսը) հայեր են, մնացածը՝ ադրբեջանցիներ, ռուսներ, այլազգիներ:

Մարզն ունի հինգ շրջան. **Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, Հադրութի և Շուշիի:** Բնակավայրերից չորսը քաղաք են, երկուսը՝ քաղաքատիպ ավան, մեկը՝ բանավան, 235-ը՝ գյուղ: Մարզի կենտրոն Ստեփանակերտը Մոսկվայից

հեռու է 2816, Բաքվից՝ 392, Երևանից՝ 362, Թբիլիսիից՝ 375 կիլոմետր:

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Արցախ-Ղարաբաղի[3] պատմությունն սկիզբ է առնում անհիշելի ժամանակներից: Երկրամասի **Որվան (Ազոխ), Մծախաչ (Մեծ Թաղլար), Հոնուտ (Քարին տակ), Գայլապուն (Արցախաշեն), Շիկաքար (Քարագլուխ), Խորաձոր (Թարթառի հովիտ) և Զորի (Զինգյանակապի հովիտ)** քարանձավներից հայտնաբերված ի-

[3] *Արցախ-Ղարաբաղ անուններն իմաստային առումով որոշակի նմանություն ունեն, քանզի արտահայտում են երկրամասի մակերևույթի բնույթը: Արցախ անվանումը գործածական է անհիշելի ժամանակներից: Հայկական ավանդապատումներում նրա ծագումը բացատրվում է երկու կերպ. առաջինը* ԱՐ *(ամյանի),* ՑԱԽ *(այգի, անտառ), երկրորդը պարզապես* ՍԱՐ, ՑԱԽ *բառերի ամփոփված (ինչպես դա սովորաբար կատարվում է աշխարհագրական անունների հետ) տարբերակն է: Ինչ վերաբերում է* ՂԱՐԱԲԱՂ *անվանը, ապա այն համեմատաբար նոր է, վկայված վրացական և պարսկական աղբյուրներում (XIV—XV դդ.): Կազմված է պարսկական աշխարհագրական անվանացանկի հիման վրա: Ի տարբերություն հարթավայրային մասի, որը կոչվում էր* Գաղ-ի Սաֆիա *(Սպիտակ այգի), լեռնային անտառապատ հատվածն անվանվում էր* Գաղ-ի Սիադ, *որը թրքալեզու իմաստավորմամբ նշանակում է* Ղարաբաղ *(Սև այգի): Տես՝ Քարթլիս Ցխովրեբա, հ. 2, Թբիլիսի, 1959, էջ 240 (վրացերեն): Համառայլա Մուսթաուֆի Ղազվինի, Ջեյլ-ի Թարիխ-ի Կուզիտա, Բաքու, 1936, էջ 91, 95, 127 (ռուսերեն):*

տեղեն նյութերը հաստատում են, որ Անդրկովկասի նման Արցախն էլ մտնում է այն բնակահատվածի մեջ, ուր տեղի է ունեցել մարդու ձևավորման պրոցեսը: **Խոջալու-Նորագյուղի, Ստեփանակերտի, Կրկժանի, Ամարասի, Բերդաշենի, Առաջաձորի, Մատաղիսի, Իշխանագետի, Ճկահարթի պղնձաքարի,** բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների բնակատեղիների և դամբարանների պեղումները գիտնականներին բերել են այն եզրակացության, որ այդ հնավայրերն աղերս ունեն Հայկական բարձրավանդակի համաժամանակյա հուշարձանների հետ: Ըստ էության, դրանք մեկ միասնական մշակույթի տեղական տարբերակն են, անտիկ շրջանի հայկական հուշարձաններ:

Վանի կամ Արարատյան թագավորության սեպագրերում Արցախ անունն ունի Ուրդեխինի կամ Ուրդեխե ձևերը, որոնք հայերեն Արցախ ավանդական անվան անդրադարձն են: Այս անուններով կոչված տարածքը մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներից մտնում էր Արարատյան (Վանի) թագավորության, ապա նրան հաջորդած Երվանդունիների հայկական թագավորության սահմանների մեջ: Այդ են վկայում ոչ միայն հին հույն հեղինակներ **Ստրաբոնը, Գայոս Պլինիոս Ավագը, Կլավդիոս Պտղոմեոսը, Պլուտարքոսը, Դիոն Կասսիոսը,** այլև վերջին հարյուրամյակում հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ հնագույն հուշարձանները:

Արցախն իրենից ներկայացնում էր ընդարձակ բարեբեր և հզոր մի նախարարություն, որի կենտրոնը (որոշ ժամանակ) եղել է **Ծոդք (Ծաղեք, Սոդք) գյուղաքաղաքը:** Սրա անունով էլ երկրամասը կոչվել էր **«Ծավդեացվոց իշխանություն»:** Հայկական հնագույն աղբյուրներում **Արցախը** հիշվում է նաև **«Փոքր Սյունիք»** կամ **«Սյունյաց երկրորդն»** անուններով: Հավանաբար, Արցախը որոշակի ժամանակաշրջանում Սյունյաց աշխարհի հետ մեկտեղ կազմել է մի ընդհանուր վարչական միավոր կամ էլ նկատի է առնվել նրանց պատմաաշխարհագրական ընդհանրությունը, մոտիկությունը:

Ստրաբոնն իր **«Աշխարհագրություն»** հայտնի աշխատության մեջ տեղեկություններ է հաղորդում **Մեծ Հայքի** կազմի մեջ մտնող **Արցախի («Օրխիստենե»)** մասին և միաժամանակ վկայում, որ այն բարեբեր երկիր է և պատերազմների ժամանակ հանում է մեծաքանակ հեծելազոր[4]: Ի դեպ, հայկական հին աղբյուրներ միաձայն փաստում են, որ մ. թ. ա. IV դ. Արցախը, ինչպես նաև Ուտիքը շարունակում էին մնալ հայ Երվանդունիների թագավորության կազմում[5]:

Այս իրողություններն արտացոլվել են հայոց արքունիքում նախարարների պատվաստիճանն ու

[4] **Страбон**, География, М. 1964, кн. XI, гл. XIV, § 4.

[5] **Մ. Խորենացի**, *Հայոց պատմություն, Երևան, 1968, էջ 169—170։*

զբաղեցրած տեղերը վավերացնող պետական փաստաթղթում՝ **«Գահնամակում»** և նախարարների ռազմական ուժը ցույց տվող «Զորանամակում»:

Պատմահոր՝ Մովսես Խորենացու (V դ.) վկայությամբ հայոց Վաղարշակ թագավորի կողմից Արցախի (Արանշահիկ) առաջին նախարար նշանակված Արան Սիսակյանը սերվել էր Հայկ Նահապետի տոհմից: Այստեղից էլ Արան, Արանշահիկ և Մեծարանք անունների ծագումնաբանությունը[6]:

Արցախը Հայկական միասնական պետության կազմի մեջ մնաց մինչև V դարի սկիզբը, այսինքը՝ մինչև **Արշակունյաց հայկական թագավորության վերացումը:**

***

Նախաքրիստոնեական հուշարձաններից Արցախի տարածքում պահպանվել են նախնադարյան բնակավայրեր, դամբարաններ, քարե գործիքներ, նախամարդու արվեստի հետքեր, վաղ հայկական շրջանի պաշտամունքային արձանիկներ, կուռք-արձաններ, ճանապարհացույց կոթողներ, խոյակներ, կենցաղային զանազան իրեր, դրամներ: Արցախի բնակավայրերում գտնված կիսաթանկարժեք քարերից պատրաստված մանյակները, բրոնզե նետագլխիկները, երկաթե դաշույնները, ոսկե ուլունքները, դրոշմազարդ կա-

[6] *Նշվ. աշխ., էջ 190։*

բասները, սև, փայլուն կավանոթները, որոնք զարդարված են կենդանիների ու թռչունների ոճավորված պատկերներով, վկայում են կիրառական արվեստի զարգացման բարձր մակարդակը:

Հնագույն բնակատեղիներից ամենախոշորը և ամենանշանավորը **Տիգրանակերտն** է: Այն գտնվում է **Ստեփանակերտ-Մարտակերտ** մայրուղու ձախ կողմում, **Վանքասարի** ստորոտում, այժմյան Աղդամի շրջանի Շահբուլաղի տարածքում: **Հայոց Տիգրան II թագավորը (95—55 թթ. մ. թ. ա.)** իր անունով կառուցել է տվել չորս **Տիգրանակերտ:** Ուշագրավ է, որ առաջին **Տիգրանակերտը** կառուցվել է **Արցախում 90-ական թթ. մ. թ. ա.):** ԼՂԻՄ մարզային պետական պատմաերկրագիտական թանգարանում ցուցադրված Տիգրանի պատկերով արծաթե դրամը, երկաթե նետերն ու սրերը, կավե անոթներն ու կաղապարները գտնվել են այս հնավայրից: Բացի դրանից, մինչև օրս էլ խաչենցիների լեզվում մնացած **«Տըկրակերտը» Տիգրանակերտ** անվան բարբառային ձևն է:

***

387 թ. **Հայաստանը** բաժանվեց **Բյուզանդիայի** և **Սասանյան Պարսկաստանի** միջև: Պարսկահպատակ **Արևելյան Հայաստանի Արցախ, Ուտիք** մարզերից և անդրկուրյան **Աղվանքից** կազմվեց մի մարզպանություն: Վարչական այս միավորը հայերեն կոչվեց **Աղվանք, Աղվանից աշխարհ,** պարսկերեն՝ **Առան,** իսկ այլ լեզուներով՝ **Ալբա-**

նիա։ Աղվանքին միանալով, հայկական Արցախ և Ուտիք նահանգներն սկսում են կրել ողջ մարզպանության համար ընդունված ընդհանուր Աղվանք անվանումը, որը, սակայն, նրանց համար միշտ մնաց որպես աշխարհագրական անուն։ Ի դեպ, աղվանական միասնական ազգություն գոյություն չի ունեցել։ Աղվաններ անվանումն էլ հավաքական է եղել բազմաթիվ ցեղերի համար։ Ինքը՝ Աղվանք հասկացությունը, պատմաաշխարհագրական է։ Հայ մատենագիրները Կուրի ձախափնյա (Անդրկուրյան) Աղվանքը մարզպանության կազմի մեջ մտնող **Հայաղվանքից՝ Արցախից** և **Ուտիքից** տարբերելու համար առաջինը միշտ անվանում են Բուն Աղվանք։ Այն զբաղեցրել է Կուր գետի ձախափնյա մասը, որտեղ բնակվող 26 աղվանական ցեղերից մեկի՝ համար Մեսրոպ Մաշտոցը 420-ական թվականներին գրեր հորինեց։ Սակայն դրանք գործնական կիրառություն չգտան մյուս ցեղերի մոտ և ընդհանրապես չօգտագործվեցին[7]։

IV դարի արշալույսին Արցախում տարածվում է քրիստոնեություն։

V դարի սկզբին Արցախը, պատմական Հայաստանի մյուս նահանգների հետ միասին, լծվում է այն դարակազմիկ վերելքին, որ կապված էր ազգային՝ հայկական գրերի ստեղծման ու տարածման հետ։ Գրերի հանճարեղ արարիչ Մեսրոպ Մաշտոցը դեռևս նույն դարի սկզբներին հայկական առաջին դպրոցներն է բացել Արցախում։

V դարում կազմակերպված հակապարսկական հուժկու ապստամբությամբ, որը հայտնի է **Վարդանանց սրբազան պատերազմ** անունով, հայերը ստիպեցին Պարսկաստանին հրաժարվել Հայաստանում զրադաշտական կրոնը բռնությամբ տարածելու քաղաքականությունից։ Այդ պայքարում իր ամենագործուն մասնակցությունն ունեցավ Արցախը, հատկապես նրա փառաբանված այրուձին՝ **Առանշահիկ Բակ** իշխանի գլխավորությամբ։ Ապստամբությունից հետո հայ ժողովրդի մի զգալի մասը ապաստան գտավ Արցախի **«անմատչելի ամրոցներում, թանձրախիտ անտառներում»**[8] և այդտեղից էլ շարունակեց պարտիզանական պայքարն օտար բռնակալության դեմ։

Մոտավորապես նույն դարի վերջին քառորդում պարսկահպատակ մարզպանության ներսում Հայկական Աղվանքը (Արցախ, Ուտիք) ձեռք բերեց որոշակի ինքնուրույնություն և իրեն հայտարարեց թագավորություն։ **Վաչագան Բարեպաշտի** հիմնած պետական կազմավորման ներքին կյանքը կարգավորվում էր **«Սահմանադրություն կանոնականով»**, որը մեծապես նպաստեց երկրամասի մշակութային ու տնտեսական աննախընթ-

[7] *Մանրամասն տես՝ Ստ. Մելիք-Բախշյան, Այո՛, ճշմարտություն, ո՛չ թե հորինվածք, «Երեկոյան Երևան», 28 հուլիսի 1989 թ., № 174։*

[8] Եղիշե, *Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 125—127։*

թաց վերելքին: Մատենագիրը վկայում է, որ այդ ժամանակ երկրամասում կառուցվել են տարվա օրերի թվով վանքեր ու եկեղեցիներ[9]:

Շինարարական նման մեծ թափն առաջին հերթին կապված էր 301 թվականին քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու հետ, ինչպես նաև Հայաստանում ստեղծված քաղաքական, տնտեսական բարենպաստ պայմաններով: Հայ եկեղեցու առաջին հովվապետ **ս. Գրիգոր Լուսավորչի** հիմնադրած անդրանիկ տաճարների ու վկայարանների թվում էր նաև **Արցախի Ամարասը**, որի հորինվածքը, անտարակույս, օրինակ է ծառայել երկրամասի առաջին եկեղեցիների կառուցման համար: IV—VII դարերում Արցախում կառուցված հուշարձաններից են **Լուսավորչի թոռ Գրիգորիսի դամբարանը, Գլխո կամ Հոռեկավանքը, Եղիշե Առաքյալի վանքը, Դադիվանքի հնագույն եկեղեցին, Վաչագան Բարեպաշտի տաճարը, Օխտը դռնանիի, Խոժոռաբերդի գմբեթավոր տաճարները, Խտուդրեն** և այլք:

Դրանք հիմնականում միանավ բազիլիկներ են, հայկական ժողովրդական գլխատների՝ գմբեթ-երդիկի սկզբունքով կառուցված գմբեթավոր-խաչաձև հորինվածքով դահլիճներ, որոնք իրավամբ համարվում են վաղ միջնադարի հայկական ճարտարապետության նշանակալից ստեղծագործություններ:

[9] *Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 265,*

Հայկական շինարվեստին բնորոշ (վաղ միջնադարյան) խարիսխներ, խոյակներ, սահմանաքարեր՝ ճանապարհացույց կոթողներ են պահպանվել **Բռի Եղցի վանքային համալիրում, Ծմակահողի Վանառ բնակատեղիում, Մարտակերտում, Ճարտարում, Մեծ Թաղլարում և Տողում:**

Դրան զուգահեռ երկրամասում ծաղկում ապրեցին նաև մատենագրությունը, ճարտասանությունը, գրականությունը, թարգմանությունը: Վաղ միջնադարյան հայկական ստեղծագործական մտքի փայլուն գործերից են **Դավթակ Քերթողի «Ողբը», Մովսես Կաղանկատվացու** հայոց արևվելից կողմանց **պատմությունը:**

Ազգային վերելքի ուղին, դժբախտաբար, չէր կարող հարատևել, քանզի պարսիկ մոլեռանդ մոգերը չէին կարող հանդուրժել, որ իրենց երկրին այդքան մոտ հզորանար և քրիստոնեություն տարածեր ինքնուրույն պետականություն ունեցող հայկական երկրամասը, որի եկեղեցին իր ազդեցությունը տարածել էր մարզպանության գրեթե ամբողջ տարածքում: Գործի դրվեց արևելյան խարդախ ու մամլիչ քաղաքականությունը: Եվ ահա, VI դարի վերջերին Արցախում և իր պատմական ճակատագրով նրա հետ մի էթնիկական ամբողջություն կազմած **Ուտիքում**, որի կենտրոնը էր **Պարտավը**[10], իշխանական հին տունը՝

[10] *Ռուս նշանավոր պատմաբան Ս. Սոլովյովը, իր «Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից ի վեր» դասական հետազոտության մեջ նկարագրելով ռուսների արշա-*

Առանշահիկները, փոխարինվում է մի նոր հարստությունով՝ **Միհրանյանների** տիրապետությամբ: Ավելի քան երկդարյա հայանպաստ քաղաքականության շնորհիվ նրանք բարեբախտաբար, կարողացան պահպանել երկրամասի ներքին և արտաքին ամբողջականությունը:

Աղվանական մարզպանությունն իր գոյությունը պահպանեց մինչև արաբական հարձակումները: VIII դարի սկզբներին այն մտցվեց Արաբական խալիֆայության կազմած **Արմինիա** վարչատարածքային միավորման մեջ և անվանվեց **Երկրորդ Արմինիա:**

Թե՛ Աղվանական մարզպանության (V—VIII դդ.), թե՛ Արմինիայի գոյության ժամանակներում (VIII—IX դդ.) Կուրի աջափնյա հայկական **Ուտիքում** և **Արցախում** թեև ապրում էին նաև պարսիկներ, արաբներ, հավանաբար նաև աղվաններ, սակայն հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն և երկրամասի տնտեսական ու քաղաքական կյանքին տոն տվողները հայ իշխաններն ու հայոց եկեղեցին էին:

Այսպես էր նաև IX—XI դդ., երբ հիշյալ նահանգները մտնում էին **Բագրատունիների հայկական թագավորության**, իսկ սելջուկների Անդրբկովկասից արտաքսվելուց հետո (XIII դ.)՝ **Զաքարյանների հայկական իշխանությունների** մեջ:

Այսպիսով, Արցախն ի սկզբանե եղել է հայ ժողովրդի բնօրանքներից մեկը, ունեցել է բացառապես հայկական՝ Հայ Նահապետի սերունդներից սկզբնավորված նախարարական-իշխանական տուն, որն էլ իր հերթին միշտ մտել է հայոց միասնական թագավորության կազմի մեջ:

***

Արաբական տիրապետության շրջանում ևս Արցախի հայ իշխանները եռանդուն կերպով գլխավորում էին Արցախի քաղաքական ու հոգևոր կյանքի առաջընթացը: Նրանց հովանավորությամբ բարգավաճում են մշակութային այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին **Ամարասը՝ Մյուս Հաբանդ գավառում, Ծիծեռնավանքը, Վարազգոմավանքը՝ Բերդաձորում, Կատարովանքը, Օխտը դռնին, Գտիչը՝ Դիզակում, Հոռեկա կամ Գլխովանքը, Ջրվշտիկ** կամ սբ. **Եղիշե առաքյալի վանքը՝ Մեծկողմանք գավառում, սբ. Հակոբավանքը և Գանձասարը՝ Մեծառանից գավառում, Վաչագանի տաճարը՝ Պիանքում, Դադիվանքը** և **Խուդավանքը՝ Վայկունիքում** և այլք:

IX դարի սկզբին քաղաքական ասպարեզից վերացված **Միհրանյաններին** նորից փոխարինելու եկան **Առանշահիկները:** Նրանց երկու մարտունակ ճյուղերը (մեկը **Խաչենում՝ Խաչենագետի** և

վանքը Անդրկովկասում 943—944 թթ., հայտնել է այն մասին, որ նրանք «բարձրացան Քուռ գետի հոսանքն ի վեր և հանկարծ հայտնվեցին Պարտավ-Բարդաայի՝ Առանի կամ ներկայիս Ղարաբաղի մայրաքաղաքի դեմ-հանդիման։ Բարդան, մերձկովկասյան հնագույն քաղաքներից մեկը, հայերին էր պատկանում դեռևս V դարում»։ Տես՝ նշվ. աշխ. (Մոսկվա, 1959, հ. 1, էջ 151)։

Թարթառի հովտում, մյուսը՝ Դիզակում) իրենց պսակեցին հակասարաբական հաղթական ճակատամարտերով: Ճիշտ է, ճակատամարտերի խիզախ կազմակերպիչներ **Սահլ Սմբատյանը** (Խաչենի տերը) և **Եսայի Աբու Մուսեն** (Դիզակի տերը ու Քթիշի պաշտպանության լեգենդար հերոսը) վերջիվերջո ընկճվում են թշնամու խարդավանքից, սակայն նրանց արժանավոր ժառանգորդներին՝ **Գագիկին** և **Համամ Գրիգոր Բարեպաշտին** հետագա դարերում հաջողվում է իրենց տիրություններն անառիկ պահել օտար ասպատակիչներից:

Այսուհանդերձ, ամեն անգամ, երբ պարտադրվում էր լինել-չլինելու կենսական խնդիրը, տեղի հայ բնակչությունը շտապում էր պատսպարվել իր երկրամասի անմատչելի բերդ-ամրոցներում: Առավել հայտնի են **Կաչաղակաբերդը, Ճիկաքարը, Խաչենաբերդը, Տիգրանաբերդը, Ծիրանաքարը, Խոխանաբերդը, Ականաբերդը, Լևոնաբերդը, Ջրաբերդը, Գյոլիստանի, Փառիսոսի բերդերը, Մայրաբերդը, Մածնաբերդը, Դողը, Գոռոզը, Յորաբերդը, Խոժոռաբերդը, Ամոտուկը, Դիզափայտը** և ուրիշներ, որոնց հզոր պարիսպների տակ նշանավոր դեպքեր են տեղի ունեցել: Որպես կանոն, արցախական բերդ-ամրոցների համակարգի մեջ առաջնակարգ դեր են խաղացել քարայրները, ազդանշանային կայանքները:

Արցախ-Ղարաբաղի հարյուրից ավելի բերդ-ամրոցներն իրենց տեղական առանձնահատկու-

թյուններով հանդերձ՝ հար և նման են Հայաստանի մյուս նահանգներում պահպանված բերդերին և համարվում են հայկական ամրոցաշինության դասական սկզբունքներով կառուցված ինժեներական խոշոր պաշտպանական համակառույցներ:

***

IX դարի վերջին արաբական լուծը թոթափած **Արցախը Հայաստանում** հաստատված **Բագրատունյաց թագավորության** կազմում հայոց արևվելից կողմանց նահանգներից մեկն էր: Արաբներն արդեն դադարել էին երկրամասի համար սպառնալիք լինելուց, սելջուկ-թուրքերը դեռևս չէին երևացել, իսկ պարսիկները բզկտված էին: Հզորանում էին տեղական Առնաշահիկ իշխանությունները, կառուցվում նոր վանքային համալիրներ, եկեղեցիներ, կերտվում բազմաթիվ զմայլելի խաչքարեր, էլ ավելի ամրացվում բերդերը, վերաշինվում ավերված բնակավայրերը: Դա հայրենաշինական վերելքի մի նոր ժամանակաշրջան էր, որի արգասիքը երկրամասի ճարտարապետական նշանավոր **Թարգմանչաց վանքի համալիրն** է (989 թ.), **Հաղարծնի ս. Աստվածածին եկեղեցին** (1071):

Աշխուժանում էին գրական կյանքը, մատենագրությունը, մանրանկարչությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը: **Համամ Արևելցու, Վախթանգյանների և Փառիսոսի իշխան Սահակ Սևադայի** բորբոքած մշակութային կյանքի արգասիքն

են միջնադարյան հայ մատենագրության հանրահայտ երկերից **Մովսես Դասխուրանցու «Պատմություն Աղվանից աշխարհի»**-ն և **Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»**՝ հայ և համաշխարհային իրավաբանական մտքի հանճարեղ ծնունդը: Ապա հանդես եկան **Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակներցին,** որոնք **Ստեփանոս Օրբելյանի** և **Մխիթար Այրիվանցու** հետ միասին ներկայացնում են XIII դարի հայ մատենագրությունը:

X դարից սկսած երկրամասի քաղաքական և մշակութային կյանքում վիթխարի դեր է կատարում Խաչենի իշխանությունը: Նրա ընդգրկած տարածքը (հատկապես **Խաչենագետի, Թարթառի, Կարկառի** և **Իշխանագետի** ավազանները) դառնում է հայկական մշակույթի ամենածաղկուն օրրաններից մեկը:

Արցախը կամ արդեն նրան անվանապես փոխարինած **Խաչենը**[11] XI—XII դարերում ենթարկվում է սելջուկ թուրքերի հարձակումներին: XII դարի վերջերից Խաչենը մտնում էր Զաքարյանների գլխավորությամբ ազատագրված հյուսիսարևելյան Հայաստանի կազմի մեջ:

Խաղաղ կյանքի կարճատև ժամանակաշրջանում ստեղծվեցին ճարտարապետական մեծարժեք կառուցվածքներ: Փաստորեն XII—XIII դարերում ձևավորվեց հայկական ճարտարապետության արցախյան դպրոցը, որի գլուխգործոցները հիմնականում կենտրոնացված են վանքային համալիրներում: Դրանցից **Մակարավանքի ս. Աստվածածին եկեղեցին** (1198), **Նոր Վարագավանքի ս. Նշան տաճարը** (1190—1200), **Գանձասարի Հովհաննես Մկրտիչ եկեղեցին** (1216—1238), **Խորանաշատի կաթողիկեն** (1211—1222), **Գոշավանքի եկեղեցին** (1191—1241), **Դադիվանք խոշոր համալիրի կաթողիկեն** (1214), **Գտչավանքի գլխավոր եկեղեցին** (1241—1248), **Բռի եղցի համալիրի որմնափակ խաչքարերը** (1230—1270), **Խաղավանքի կաթողիկեն** (1204) և այլք համարվում են հայ ճարտարարվեստի փայլուն ստեղծագործություններ[12]: Միաժամանակ, վանքային համալիրները եղել են ոչ միայն խոշոր կրոնական օջախներ, այլև քաղաքական, մշակութային, ազգապահպան ազդեցիկ կենտրոններ: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ ոչ մի տեղ եկեղեցին այնպես կապված չի եղել ժողովրդի հետ, ինչպես Հայաստանում: Ի դեպ, քրիստոնեությունը Հայաստան մուտք է գործել մեր թվարկության առաջին դարում: 293—301 թթ. ընթացքում տարածվել է Մեծ Հայքի թագավորության մեջ, Տրդատ

[11] *Բյուզանդական կայսր Կ. Միրանածինը (X դ.) նամակագրական կապի մեջ էր Հայաստանի Խաչեն-Արցախ նահանգի իշխանության հետ: Տես՝ Կ. Միրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք II, գլ. 48:*

[12] **А. Л. Якобсон**, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). «Исследования по истории культуры народов Востока» (Сборник в честь И. А. Орбели), М-Л, 1960 г., стр. 151.

Գ թագավորի (274—330 թթ.) և Գրիգոր ս. Լուսավորչի ջանքերով: 301 թ. այն պաշտոնապես հռչակվել է Մեծ Հայքի պաշտոնական կրոն[13]: 302 թ. Կեսարիայի մետրոպոլիտը Գրիգոր Լուսավորչին ձեռնադրել է արքեպիսկոպոս: Այնուհետև Լուսավորիչը և իր հաջորդները կրել են «կաթողիկոս հայոց մեծաց» տիտղոսը: Մինչև 368 թ. հայոց եկեղեցին ստորադասված էր Կեսարիայի մետրոպոլիտությանը: Պապ թագավորի հատուկ կարգադրությամբ այն «տիեզերական» եկեղեցու կազմում դարձավ Կեսարիայից անկախ, ինքնուրույն և մինչև այժմ պահպանում է իր անկախությունը:

Ճարտարապետության հետ **շաղկապված՝ զարգանում** էին նաև քանդակագործությունն ու որմնանկարչությունը: Կարելի է ամենայն որոշակիությամբ ասել, որ Հայաստանի ոչ մի նահանգում եկեղեցական որմնանկարչությունն այնքան լայն կիրառում չգտավ և նկատելի հետք չթողեց, որքան Արցախում[14]: Դրա փայլուն վկայություններն են Դադիվանքի, Կիրանց տաճարի, Առաքելոց վանքի և այլ հուշարձանների որմնանկարները:

Հայկական արվեստի մի ինքնուրույն բնագավառ են կազմում արցախական աշխարհի հազարավոր խաչքարերը, տապանաքարերը, բարձրա-

---

[13] *Ի դեպ, վաղ միջնադարում հայ եկեղեցու իրավասության սահմանները տարածվում էին նաև երկրի հյուսիս-արևելից նահանգների վարչաքաղաքական ամբողջ տարածքում: Արցախ-Ուտիք նահանգների եպիսկոպոսությունների աթոռանիստ-կենտրոնները՝ Ամարասը, Մեծառանը, Գարդմանը, Պարտավը, միացած էին բուն Աղվանքի Կապանակու, Բականակու, Շաքի և այլ եպիսկոպոսությունների հետ ու կազմում էին հայ եկեղեցու Աղվանից մարզպանության թեմը: Բայց քանի որ մարզպանության կենտրոնը 462—636 թթ. եղել է Պարտավը, բնականաբար, նրա եպիսկոպոսությունն ստացել էր առանձնահատուկ կարգավիճակ և աստիճանաբար դարձել մարզպանության գլխավոր հոգևոր կենտրոն, սկզբում որպես եպիսկոպոսություն, իսկ VII դ. սկզբից, արդեն, որպես կաթողիկոսություն: Այսպիսով, հայ առաքելական եկեղեցուց առանձնացվել և կազմակերպվել էր մի ինքնուրույն եկեղեցի, որը սակայն միշտ ենթարկվել է Ամենայն հայոց կաթողիկոսին:*

Մինչև IX դարի սկիզբը հայոց արևելից կողմանց հոգևոր կենտրոնը գտնվում էր Պարտավում: Այնուհետև քաղաքական բարդ իրավիճակից ելնելով՝ տեղափոխվում է Բերդակ, Ջարեֆ, Ռամիշ, Քարաճերթ, Ջալեթ: Իսկ XIV դ. սկսած երկրամասի հոգևոր կենտրոնն էր Գանձասարը: Այդ պատճառով էլ անվանվում էր Գանձասարի կաթողիկոսություն: Այն գոյություն է ունեցել մինչև 1836 թ., այնուհետև ռուսական իշխանությունների միջամտությամբ բաժանվել է երեք թեմերի՝ Արցախի, Գանձակի և Շամախու, որոնք, ինչպես միշտ, ենթարկվում էին Էջմիածնի հայոց կաթողիկոսությանը:

Հայ եկեղեցին Արցախ-Ղարաբաղում դադարել է գոյություն ունենալ 1932 թ.: Այդ ժամանակ մարզում դեռ գործում էին 112 եկեղեցի և 18 վանք, որոնցում ծառայում էին 276 վանական: Ահա արդեն 60 տարի է, ինչ Արցախում չի գործում ոչ մի եկեղեցի: Միայն շնորհիվ Ղարաբաղյան հուժկու շարժման, հնարավոր եղավ Արցախում նորից բացելու եկեղեցիների և վանքերի դռները: Հայ եկեղեցուն են վերադարձվել Ամարասի վանքը, Հադրութի, Մարտակերտի և Ասկերանի շրջանների մի քանի եկեղեցիներ:

[14] *Հ. Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII—XIV դդ., Եր., 1989, էջ 25:*

քանդակները, մանրանկարները, գրչագրերը, հուշակոթողները և վիմագիր արձանագրությունները: Ամենուրեք սփռված տապանաքարերի ու խաչքարերի մի մասի վրա պատկերված է միջնադարյան հայ գեղջուկն իր հագուստ-կապուստով, հոգևորականն իր տարազով, երաժիշտն իր երաժշտական գործիքներով և, հատկապես, զինվորը իր ռազմական հանդերձանքով: Սակայն հույժ արժեքավոր այդ կոթողները ուշագրավ են ոչ միայն իրենց ճանաչողական նշանակությամբ, այլև նկատելի չափով պատկերացում են տալիս հայ քարգործ վարպետների գեղագիտական ճաշակի ու նախասիրությունների մասին:

Դեկորատիվ զարդաքանդակի մի կատարյալ պատկերասրահ է Գանձասար վանքը: Հռչակավոր Աղթամար վանքի հետ միասին այն հայ ճարտարապետության բացառիկ «քանդակային» բնույթի անկրկնելի հուշարձան է:

Քանդակագործության առումով ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում Դադիվանքի նրբահյուս բարձրաքանդակները, վարդյակաձև նախշազարդերն ու խորագիր վիմագրությունները: Հայոց պատմության մեջ առատ տեղեկություններ կան այն մասին, որ Դադիվանքի կաթողիկեի հիմնադիր **Արզա-Խաթունը** տիրապետում էր հյուսվածքեղենի, մանավանդ մեծածավալ վարագույրների արարման նուրբ ու դժվարին արվեստին: Հայտնի է, որ նա վարագույրներ է հյուսել Գոշավանքի, Դադիվանքի, Հաղպատի,

Մակարավանքի և այլ նշանավոր վանքերի խորանների համար: Նշված հուշարձանների էթնոմշակութային պատկանելությունը, այսինքն՝ հայկական լինելն անհերքելի է, վկայված օտարազգի և հայ պատմիչների հավաստի տեղեկություններով, ինչպես նաև հայերեն հազարավոր վիմագիր արձանագրություններով: Դա ապացուցվել է նաև զարդարվեստի բազմատարբերակ առանձնահատկություններով: Միջնադարի բոլոր փուլերում այդ նյութերն անխտիր որոշակի ընդհանրություններ ունեն Կենտրոնական Հայաստանի զարդարվեստի հետ. դրանք նույն արմատներն ունեն և կազմում են հայ քարարվեստի ընդհանուր նվաճումների բաղկացուցիչ և անբաժան մասը:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշել է ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, պատմաբան **Ա. Ն. Սախարովը, «Կուր գետի աջափնյա մշակութային միջավայրը եղել է հայկական, և այդ միջավայրի ստեղծագործությունները էլ գրված են հայերեն»**[15]:

Հայկական են նշված տարածքի վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, բերդ-ամրոցները, ինչպես նաև հնագիտական, պատմաճարտարապետական մյուս բոլոր հուշարձանները: Հայերեն են փորագրված տասնյակ հազարավոր վիմագրությունները: Հայ ժողովրդի պատմությանն են վերաբերում նաև արձանագրություններում հիշա-

[15] «Գրական թերթ», *14 օգոստոսի, 1987։*

տակվող դեպքերը, դեմքերը, իրադարձությունները՝ բազմիցս վկայված հայ պատմիչների երկերում, օտար հեղինակների աշխատություններում: Հայկական են նաև այդ հուշարձանների անունները: Եվ դա պատահական չէ: Որովհետև Արցախը նույնպես Հայաստան է, նրա առաջատար նահանգներից մեկը: Դա արտահայտված է դեռևս Ներոնի ժամանակներում՝ պատի վրա փորագրված աշխարհի մարմարե քարտեզում, որը պահվում է Հռոմում, Կոլիզեյից ոչ այնքան հեռու: Արցախը հայկական լինելու իրողությունը հաստատվում է նաև XIII դ. պարսիկ անանուն աշխարհագրի վկայությամբ՝ «Խաչենի (Արցախի— Շ. Մ.) բնակչությունը հայկական է»[16]: Իսկ վրացիները նշում են, որ «նրանց ցարին անվանում են թագավոր»: Եվ ահա Խաչենի՝ Արցախի հայ բնակչությունն իր հայկական հողում ստեղծել է հայկական մշակութային միջավայր: Այն էլ ասենք, որ Արցախի հայերը ոչ միայն պատկանում են արմենոիդ մարդաբանական ընտանիքին, այլև խորհրդային հայտնի մարդաբան Վ. Բունակի համոզմամբ՝ կազմում են այդ տիպի ամենացայտուն ներկայացուցիչները[17]:

***

XIII դարի առաջին կեսին թաթար-մոնղոլները նվաճում են Անդրկովկասը և երկարատև ստրկության դատապարտում հպատակ ժողովուրդներին: Արցախ-Խաչենում նրանց կատարած չարաբաղդությունները մանրամասնորեն մեզ են հաղորդել մեր պատմիչներն ու հիշատակագիրները[18]: Խաչենի գահերեց տեր **Հասան Ջալալի** գործադրած ջանքերի շնորհիվ **երկրամասը մասամբ** զերծ մնաց ավերածություններից, սակայն նրա մահից հետո (1261) այն ևս ենթարկվեց եկվոր ասպատակիչների վայրագություններին:

Երկարատև պատերազմների, այլևայլ խարդավանքների հետևանքով, ի վերջո, Արցախը[19] մասնատվում է : Նրա հյուսիսարևելյան կարևոր գավառները՝ **Կամբեջան և Փառիսոսը,** իսկ արևելքում դաշտային **Մուխանքը** կտրվում են հայկական միջավայրից և կորցնում իրենց ազգագրական ամբողջությունը:

Մոնղոլ-թաթարների հետքերով եկած **կարակոյունլու** (սև ոչխարավոր) և **ակ-կոյունլու** (սպիտակ ոչխարավոր) թուրքական ցեղերի դժնդակ տիրապետության տակ կասեցվել է երկրամասի

---

[16] Лоив АН СССР, рукопись А-233, л. 2026.

[17] **В. Бунак**, Антропологический состав населения Кавказа, Вестник Гос.музея Грузии, 1946, стр. 96.

[18] Կիրակոս Գանձակեցի, *Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 192—194։*

[19] *XIV դ. գտնվելով Արցախում, գերմանացի ճանապարհորդ Հ. Շիլտբերգերը վկայում է, որ այն գտնվում է Հայաստանում։ Ի դեպ, տեղին է նշել, որ պատմության ազգբեջանցի կեղծարար Զ. Բունիաթովը նրա աշխատությունը վերաթարգմանելիս միտումնավոր դուրս է նետել Հայաստանին և հայերին վերաբերող բոլոր վկայությունները։* Путешествие Ганса Шильтбергера по Европе, Азии и Африке, Одесса, 1866, стр. 110.

մշակույթի զարգացումը: Պարբերաբար կրկնվող ասպատակություններից, կողոպուտից ու ավերածություններից ժողովուրդն աչք չէր բացում, որ շենացներ իր մշակութային օջախները: XV—XVI դարերը համարյա ոչինչ չեն թողել, որ հնարավոր լիներ դրանք համեմատել մարզի հնամենի հուշարձանների հետ: Սակայն կանգուն են արվեստի այնպիսի գեղեցիկ նմուշներ, ինչպիսիք են քանդակազարդ խաչքարերն ու տապանական կոթողները: Թեև ճարտարապետական այդ փոքր ծավալի գործերը չունեն XIII դարի հայկական վերածնության տաք շունչը՝ **Դադիվանքի, Գտչավանքի, Բռի եղցի համալիրի** և **Գոշավանքի խաչքարերի** արվեստի մակարդակը, այդուհանդերձ, իրենց զարդամոտիվներով, մարդկային կերպարների, հատկապես հեծյալների առատությամբ, նուրբ նախշերով ու ընտիր վիմագրերով դասվում են հայ քանդակագործության լավագույն ստեղծագործությունների շարքը:

Ազգային պետականության կորստյան հարյուրամյակներում փոփոխությունների ենթարկվեցին նաև հայկական վաղնջական բազմաթիվ տեղանուններ: Երկրամասի **Արցախ** անունը կորցնում է իր նախկին վարչաքաղաքական նշանակությունը և փոխարինվում օտարահունչ Ղարաբաղով:

***

XVII դարից սկսած Արցախ-Ղարաբաղն ապրում է քաղաքական-վարչական մի յուրահատուկ կառուցվածքով, որը պատմության մեջ հայտնի

է «մելիքություն» անունով: Հայկական Առանձնահիկ իշխանապետության հիմքերի վրա, մանր ճյուղերի նման, առաջ եկան քաղաքական նոր կազմավորումներ, որոնք Պարսկաստանի գերիշխանության պայմաններում պահպանել էին տեղական ինքնավարության իրավունքները: Քաղաքական եռանդուն գործունեությամբ հայտնի էին **Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի** և **Դիզակի մելիքները**[20], որոնք մշտապես վառ էին պահում ժողովրդի ազատասիրական ոգին, կոփում այն գալիք մեծ արհավիրքներին դիմակայելու համար:

Մելիքներն ունեին իրենց առանձին սղնախները՝ ռազմական նշանակության բերդերը, ամրոցներն ու նստավայրերը: Այսպես, **Գյուլիստանի** մելիքի ամրոցներից մեկը գտնվում էր Գյուլիստան գյուղի մոտ՝ անմատչելի լեռան գագաթին, իսկ մյուսը՝ **Թալիշի Հոռեկավանքի** մոտ: Ջրաբերդի մելիքի ամրոցը գտնվում էր **Թարթառի** և նրա վտակ **Թրղիի** միախառնման վայրում: Այդ բերդի անունով էլ ամբողջ գավառը կոչվում էր **Ջրաբերդ: Խաչենի մելիքների** նստավայրը **Խնձրիստան բերդ-ամրոցն** էր, **Պտկեսբերքի վանքի** մոտ, Խաչենագետի աջ ափին և կոչվում էր **Ոլուպապա բերդ:** Խաչենի մելիքության մյուս

[20] *XIX դարի վերջին Բաֆֆին շրջագայել է Ղարաբաղում, հավաքել անհրաժեշտ նյութեր և գրել Ղարաբաղի մելիքների պատմությունը (տես՝ Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, երկերի ժող., հ. 10, Երևան, 1964, էջ 161—382).*

ամրոցներն էին **Կաչաղակաբերդը, Ծիկաքարը, Խոխանաբերդը,** որոնք գոյություն ունեին դեռևս Խաչենի իշխանության ժամանակներից: **Վարանդայի մելիքի** ամրոցն **Ավետարանոց մելիքանիստ գյուղում** էր, իսկ մյուսը՝ **Շոշվա բերդը,** այժմյան **Շուշի քաղաքի տեղում: Դիզակի մելիքի նստավայրը Տողն էր,** ամրոցը՝ **Գտչավանքի** թիկունքում, **Բերդասարի կատարին:** Դրանից բացի, Դիզակի մելիքները բերդեր են ունեցել **Ցոր գյուղում** և **Վանեսա սարում:**

Գրեթե ամբողջությամբ պահպանվել են ինչպես վերը նշված բերդը-ամրոցները, այնպես էլ մելիքների ամարաթ-պալատները: Գյուլիստանի մելիք Բեգլարյանների պալատը բաղկացած է բազմաթիվ թաղակապ սենյակներից: Այն գտնվում է Գլխովանքի տարածքում: Ջրաբերդի մելիքներն ունեցել են երեք ապարանք: Ամենանշանավորը **Քաղաքատեղինն** է՝ Թարթառի աջ ափին, Ջրաբերդի մոտերքում: Մյուսը **Կուսապատ-Մոխրաթաղ** գյուղերի արանքում է՝ **Ինը մաս** հնավայրում: Երրորդի հետքերը կարելի է տեսնել Գյուլաթաղ գյուղում: Խաչենի մելիքների իշխանական պալատը եղել է **Խնձրիստանում,** իսկ Վարանդայի մելիք Շահնազարյանների երկու ամարաթներից մեկը գտնվում էր **Ավետարանոցում,** մյուսը՝ **Շուշիում,** որն արդեն ավերվա՛ծ է: Դիզակի մելիք Եգանի երկհարկանի պալատը **Տողի** նշանավոր հուշարձաններից մեկն է: **Արցախի մելիքների իշխանական ամարաթները հայկական պա-**

լատական կառուցվածքների լավագույն նմուշներ են և առատ նյութ են տալիս ուշ միջնադարյան քաղաքաշինական ճարտարապետությունը արժեքավորելու համար:

XVII—XVIII դդ., մասնավորապես մելիքների տիրապետության ժամանակաշրջանում, Լեռնային Ղարաբաղում կառուցվում են հիմնականում բազիլիկ տիպի, առանց գմբեթի եկեղեցիներ: Այս երևույթի գլխավոր պատճառը տնտեսական ու քաղաքական այն ծանր դրությունն էր, որում գտնվում էին մելիքները: Ճիշտ է, դարեր տևող ավերածություններից հետո, մելիքների օրոք երկրամասում հաստատվել է կարճատև խաղաղություն, որի շնորհիվ վերակառուցվել են ավերված աշխարհիկ ու պաշտամունքային շինությունները և նույնիսկ նորերն են կառուցվել, բայց և այնպես դրանք ունեցել են համեմատաբար պարզ հորինվածք և պահանջել են քիչ ծախսեր ու քիչ ժամանակ: Հիշյալ դարերում կառուցված պաշտամունքային բոլոր հուշարձանների մեջ կան ընդամենը 6 գմբեթավոր եկեղեցի, որից 2-ը՝ Հյուսիսային Արցախում: Նշենք այդ հուշարձաններից ճարտարապետական առումով առավել կարևորներից մի քանիսը. **Ավետարանոց գյուղի Կուսանաց անապատը** (1616), **Հերհերի ս. Գրիգորիս տաճարը** (1667), **Եղիշեի վանքի եկեղեցին** (1655), **Ծաղկավանքի կաթողիկեն** (1682), **Երիցմանկանց վանքի եկեղեցին** (1691), **Բերդաձորի Պարին Պիժ եկեղեցին** (1658), **Կավաքավանքի**

բազիլիկը (1742), Տող գյուղի ս. Ստեփանոս (1747), ս. Հովհաննես (1736) եկեղեցիները, Խնձրիստանի Տիրհանը (1772), Ջրաբերդի ա-նապատը (1715) և այլն:

XVIII դարի երկրորդ քառորդի սկզբին Անդրի-կովկասի մեծ մասը նվաճվել էր թուրքերի, իսկ Կուր-Արաքսյան տափաստանի հյուսիս-արևել-յան շրջանները՝ թուրքական կողմնորոշում ունե-ցող խանությունների կողմից: Հայաստանի միակ չնվաճված երկրամասերը Արցախ-Ղարաբաղն ու Սյունիքն էին, որոնց բնակչությունը Դավիթ Բե-կի, Մխիթար Սպարապետի, Ավան հարյուրապե-տի և մելիքների գլխավորությամբ համառ մար-տեր էր մղում թուրք զավթիչների դեմ՝ հանուն ազ-գային անկախության:

Միաժամանակ մելիքներն ուղիներ էին փընտ-րում, դիվանագիտական կապեր ստեղծում Եվրո-պայի մի շարք քրիստոնեական պետությունների, նաև Ռուսաստանի հետ: Հրատարակված են այդ փոխհարաբերությունների վերաբերյալ վկայա-գրեր, որոնք, ինչպես նաև չհրապարակված բազ-մաթիվ արխիվային այլ փաստաթղթեր, վկայում են, որ եվրոպական պետություններն Արցախ-Ղա-րաբաղի հայ մելիքներին ճանաչել են որպես ինք-նուրույն, անկախ իշխողների: Դրա պերճախոս օրինակը Պետրոս Մեծի հրովարտակն է, Պավե-լի կայսերական շնորհագիրը՝ «Рескрипт»-ը, որն սկսվում է հետևյալ բառերով. «Державной и знаемнитой Карабахской области, бла-городным меликам Джамшуду Шахназарову,

владельцу Варандинскому и Фридону Беглярову, владельцу Гулистанскому и всем прочим этой знаменитой области владетельным мелик-кам и юзбашам и всему народу их»[21].

Ավելին, եղել են նույնիսկ խոստումներ՝ Արցա-խում վերստեղծելու հայկական պետություն: Հատ-կանշական է իշխան Գրիգորի Պոտյոմկինի գե-կույցը Եկատերինա կայսրուհուն. «Ղարաբաղը, որ կազմված է հայ ժողովրդից, պետք է հանձնվի ազգային վարչությանը և այսպիսով Ասիայում վերականգնվի քրիստոնեական մի պետություն, ինչպես որ եղել են ձեր կայսերական մեծության բարձրագույն խոստումները՝ իմ միջոցով տված հայ մելիքներին»[22]:

Մելիքների քաղաքական անկախությունը և դրա պաշտպանության համար ռազմական ուժերի օգտագործման հանգամանքներն արտացոլված են տեղում պահպանված վիմագիր հիշատակարան-ներում: Դրանք հատկապես արժեքավոր են այն առումով, որ գալիս են լրացնելու Արցախ-Ղա-րաբաղի XVII—XVIII դարերի ազգային-ազատա-գրական շարժումներով հարուստ և բախտորոշ ժամանակաշրջանի պատմության բաց էջերը:

Արձանագրությունները վկայում են, որ երկրա-մասի մեծ մելիք Եգանի մելիքական իրավունք-ները նախապես հաստատված են եղել: Նշված

[21] ЦГИА Арм. ССР, Ф. 290, оп. 1, д. 244, лл. 38—44. Сборник актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1, с. 199.

[22] «Հայրենիքի ձայն», 15 նոյեմբերի 1989, № 46.

են Իրանի տիրակալ **Նադիր շահի** կողմից **մելիք Եգանին** տրված մեծ իշխանությունը և նրա աշխարհագրական սահմանները: **Մելիք Եգանը Արցախի հայկական (վերը նշված) մահալների՝ գավառների, մելիքությունների կառավարիչն էր կամ ինչպես վիմագիրն է հավաստում՝ «խան և բեկլարբեկի»**[23]:

Ոչ պակաս հետաքրքրական տեղեկություններ են պարունակում նաև մելիքների գերեզմանաքարերի տապանագրերը.

Այս է տապանը քաջ իշխանի,
Եգան անունով մեծ մելիքի,
Որն է որդի Բարեպաշտի՝
Ղուկաս անունով վարդապետի:
Սա տիրապետեց երկրին,
Աղվանից Արցախ նահանգին
Շատ պատվեցավ պարսից ազգից
Քան իշխանները հայոց երկրի:
ՌՃՂԳ (1744 թ.):

Իսկ Վարանդայի մելիք Շահնազարի որդի քաջ **Հուսեյնի** տապանագիրը տեղեկացնում է, որ.

Այս է տապան Մելիք Շահնազարի
Որդի Մելիք Ցիսէինի.
Ոգեմ զբանս գովեսդի,

[23] *Այս և ներքոհիշյալ արձանագրություններն ամբողջությամբ տես՝ Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1988, էջ 81—82 և 144։*

Ի վերայ Մելիք Ցիսէինի,
Զօր գրեցի այս տապանի:
Սա է Տեր երկրի Վարանդայի,
ԼԵ (35) մասն գեղի,
Սայ էր հացով սեղանով լի,
Ողորմէր ամեն ազգի:
Կերպարանօքն էլ գովելի,
Թագ պարծանք հայոց ազգի,
Ցոյժ կոդորեաց ազգէն դաշկի,
Պատերազմեաց յետ օսմանցի,
Սա ոչ ետ հարկ թագաւորի,
Ամուր պարիսպ էր աշխարհի:
ՌՃԾԸ (1736 թ.):

Այս և նման բազմաթիվ ուրիշ նշանակալից փաստերն արժանի են ամենասևեռուն ուշադրության: Մանավանդ, մեր օրերում, երբ պատմության ադրբեջանցի կեղծարարների կողմից դրանք կանխամտածված անտեսվում են:

XVIII դարի 50-ական թվականներին, օգտվելով Ղարաբաղի մելիքների միջև ծագած ներքին երկպառակություններից, քոչվոր սարըջալու ցեղապետ **Փանահ Ալին Վարանդայի մելիք Շահնազար** Երկրորդի օժանդակությամբ տեղափոխվում է **Շուշի բերդը** և իրեն հռչակում Ղարաբաղի «ինքնակոչ» խան և ապա սկսում չընդմիջվող պատերազմներ մղել մելիքների դեմ: Թեև խաներին չհաջողվեց զենքի ուժով հպատակեցնել հայկական մյուս գավառների օրինական տերերին՝ մելիքներին, այդուհանդերձ, նրանք անհաշիվ ա-

վերածություններ ու տառապանքներ բերեցին արցախահայությանը, որի հետևանքները մինչև այժմ էլ զգացվում են:

Պատմաաշխարհագրական հետազոտությունները, արխիվային նյութերը, մշակույթի հուշարձանները, վիմագիր արձանագրություններն անվիճելիորեն վկայում են, որ **Շուշիում ծվարած օտար խանն իր ոտքի տակ հող չի ունեցել, երկրամասի օրինական տերը չի եղել**[24]: Ղարաբաղի հայ մելիքների վարչական տարածքում նա հայտնվել է պատահականորեն, քաղաքական հանկարծական փոփոխությունների ու մեքենայությունների հետևանքով: Այսպես կոչված **Ղարաբաղի խանությունը բնավ չի ստեղծվել ոչ ֆիզիկաաշխարհագրական, ոչ տնտեսաաշխարհագրական, ոչ պատմամշակութային և ոչ էլ էթնիկական հենքի վրա:**

Այն էլ ասենք, որ մինչև XVIII դ. կեսերը **Լեռնային Ղարաբաղում թաթարներ և այլազգի մուսուլմաններ ընդհանրապես չեն եղել: Այդ են**

[24] *Արցախ-Ղարաբաղի մելիքների առաջին պատմագիր Բաֆֆին XIX դարավերջին գրել է. «Նա (Շուշիի առաջին խան Փանահը— Շ. Մ.) Ղարաբաղի ամբողջ գավառում մի տեղ չուներ, որի վրա բերդ հիմներ: Շուշի բերդի տեղը գնեց Վարանդայի մելիք Շահնազարից: Նա ամբողջ Ղարաբաղում մի կտոր գետին չուներ, որ ծառայեցնի իր տոհմային գերեզմանատան համար և այդ պատճառով խաչենի Հասան Ջալալյան իշխաններից գնեց Աղդամը, որ մինչև այսօր ծառայում է նրա ժառանգների համար տոհմային գերեզմանատուն» (Բաֆֆի, երկերի ժողովածու, հ. 10, Խամսայի մելիքությունները):*

վկայում ինչպես հայկական, վրացական, պարսկական, այնպես էլ ռուսական պաշտոնական աղբյուրները[25]: **Այս իրողությունը չեն ժխտում նույնիսկ խանների գրագիրները և ադրբեջանցի (նախահեղափոխական շրջանի) բոլոր պատմաբանները:**

Ահա թե ինչու Արցախի տարածքում սրձանագրված բոլոր **հուշարձանները հայկական են: Հարկավ,** Շուշիի խանների օրոք և հետագա շուրջ 175 տարվա ընթացքում նրանք՝ Արցախ թափանցած եկվորները՝ Կովկասի թաթարները, կարողացել են կառուցել միայն **երկու մզկիթ** (այն էլ XIX դ. վերջերին, հայ քարգործ վարպետներ վարձելով), ավելի քան **20 հազար հայկական հուշարձանների դիմաց:** Սա է ճշմարտությունը և դրանից չի կարելի փախչել: Մյուս էական ճշմարտությունն այն է, որ XIX դ. սկզբին՝ 1823 թ. դրությամբ **հայերը կազմում էին Արցախի բնակչության 84,6, պարսիկ-թաթարները (ադրբեջանցիները)՝ 14,7, իսկ քրդերը՝ 0,7 տոկոսը**[26]:

Այսպիսին են փաստերը: Պատմական, հավաստի փաստերը: Եվ առաջնորդվել է հարկավոր միայն դրանցով, այլ ոչ թե այսօրվա քաղաքական պատվերներով, հարևանների հոգևոր ու մշակութային արժեքները սեփականելու մուրացկա-

[25] См. **А. Бутков**, Материалы по новой истории Кавказа, СПБ, 1889.

[26] Описание Карабахской провинции, Составленное в 1823 г. Тифлис, 1866, стр. 260.

նությամբ: Խորհրդային Ադրբեջանի պատմաբանասիրական գիտությունը երկար ժամանակ աչքի է ընկնում իր անբարո, հակագիտական, հակահայկական հրապարակումներով: Ադրբեջանցի «գիտնական» այրերը փնթի մսավաճառի պես անընդհատ կացնահարում են Անդրկովկասի պատմությունը, բացահայտ քամահրում պատմական փաստերը, առաջ քաշում սուտ ու կեղծ հայացակարգեր (կոնցեպցիաներ) և ապա հորթային հրճվանքով հենվում դրանց վրա ու «ստեղծում» սեփական ժողովրդի հնացրած, գունազարդված պատմությունը:

Չի կարելի չհամաձայնել փիլիսոփայական գիտությունների դոկտոր Մ. Կապուստինի հետ, որ կեղծ գիտնականները հեշտությամբ խցկվում են իրենց ազգային և ռեգիոնի մշակույթի պատմության մեջ և հին կլասիկներին քաշքշում ազգային մի «գաղութից» մյուսը և դրանով նրանց համարում իրենց ազգի «սրբություններ», մոռանալով, որ Նիզամու դարաշրջանում դեռ չկային ադրբեջանցիները՝ որպես առանձին ժողովուրդ[27]:

Օրինական հարց է ծագում. եթե Նիզամու դարաշրջանում, այսինքն XII դ. ադրբեջանական ժողովուրդը դեռևս ձևավորված չէր, չկար, ապա ինչպե՞ս կարելի է նրան վերագրել ներկայիս Ադրբեջանական Հանրապետության տարածքում գտնվող վաղ միջնադարի հուշարձանները: Ինչպե՞ս կարելի է մի հարվածով ադրբեջանական դարձնել Արցախի հայ մշակույթի գործիչներին՝ Դավթակ Քերթողին, Մովսես Կաղանկատվացուն, Մովսես Դասխուրանցուն (VII—IX դդ.) և այլն:

Վերջին տարիներին ադրբեջանական զանգվածային լրատվական միջոցները, հրատարակչությունները աննախադեպ բարբարոսական հարձակումներ են գործում Հայաստանի և հայերի վրա: Այստեղ խոսքը հիվանդագին հայատյացության, անազնվության կամ բացահայտ նենգափոխության մասին չէ, այլ պատմական փաստերի՝ իշխանությունների կողմից հովանավորվող աղավաղումների, սեփական հայեցողությամբ դրանք «դզել-փչելու» անսքող քաղաքականության: Հարկավ այդպես էին վարվում Դոստոևսկու դևերը, որոնք իրենց խեղկատակ տեսությունները հաստատելու համար դիմում էին ամեն ինչի: Նման կաղապարով ադրբեջանցի վայ գիտնականները քոչվոր թուրքերին դարձրին «նստակյաց», կովկասյան աղվաններին՝ «ադրբեջանցիներ», պարսիկ, քուրդ, հայ մշակույթի գործիչներին՝ «ադրբեջանական արվեստի կլասիկներ», հայկական խաչքարերը՝ «խաչդաշ», արցախահայերին՝ «եկվորներ» և այլն:

Ընդհանրապես մեր հարևանները դատում են տեղի ու ժամանակի պարագայից դուրս: Օգտագործում են իրենց իսկ կողմից առաջ քաշված կեղծ փաստարկները և շարահյուսում սին պատ-

[27] **М. Капустин**, Состав земли не знает грязи, «Советская культура», 27 декабря 1988 г.

մություններ: Ասենք՝ փաստերն ի՞նչ նշանակություն կարող են ունենալ այս պարագայում, որ չկան ոչ տարրական բարեխղճություն, ոչ գիտական մոտեցում և ոչ էլ ամոթի զգացում: Ամեն ինչ արվում է թուրքավարի՝ կողոպտել, թալանել ուրիշների ոչ միայն տարածքները, այլև պատմությունը, մշակույթը:

Հերթական առաջադրանք է տրված «ապացուցել», որ Ադրբեջանական Հանրապետության տարածքը հնուց ի վեր պատկանել է ադրբեջանցիներին: Պատվերը կատարվում է դարձյալ թուրքավարի. զարգացնել «թուրքերի՝ իբր թե հնուց ի վեր նստակյաց ապրելու կերպի մասին հատուկ տեսություն, որ իբր թե Արևելյան Անդրկովկասի վաղնջական բնակիչներն են: Ըստ որում բոլոր հնագիտական արժեքները դիտարկվում են որպես հին թուրքական ազգային մշակույթի մասունքներ: Մինչդեռ Ադրբեջանի քոչվորների մասին գոյություն ունի զգալի գրականություն, այդ թվում՝ տեղացի հեղինակների»[28]: Այդ ամենն իրականության, պատմության հետ կապ չունեցող զառանցանք է, ադրբեջանցի հեղինակների փափագը, իրենց ժողովրդի պատմությունը բարեփոխված, հնացած և քաղաքակիրթ ներկայացնելու աներևակայելի ցանկություն: Մինչդեռ, պատմությունը միանշանակ վաղուց ապացուցել է, որ Քուռ-Արաքսյան տափաստաններում վաչկատուն թուր-

[28] **Ю. Бромлей**, Октябрь и развитие межнациональных отношений в СССР, М. 1987, стр. 56.

քական ցեղերի հայտնվելուց հետո (XII—XIV դդ.) թուրքալեզու հիմքերի վրա աստիճանաբար տարածվում է քոչվորական կացութաձևը: Թուրքերի արտադրության հիմնական եղանակը, Կ. Մարքսի բնութագրմամբ, դառնում է թալանը: Ինչ վերաբերում է Արցախի լեռնային և նախալեռնային տարածքին, ապա թուրք քոչվորներն այստեղ (ինչպես ցույց կտրվի քիչ հետո) հայտնվեցին XVIII դ. երրորդ քառորդում միայն:

Բայց, ավաղ, նրանց հակագիտական մարգանքները դրանով չեն վերջանում: Շատ հաճախ տպագրում են հայկական բազմազան հուշարձանների՝ խաչքարերի, տապանական կոթողների, բարձրաքանդակների, վիմագրերի լուսանկարներ: Եվ ինչ եք կարծում՝ ինչպիսի մակագրությամբ. «Քար ալբանական գրությամբ»: Ոչ ավել, ոչ պակաս: Մեկ-մեկ էլ նշվում է, որ այն գտնվել է Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի կամ մեկ այլ շրջանում: Սրանով էլ սպառվում է հուշարձանի մասին հաղորդվող տեղեկությունը: Չեն նշվում հուշարձանի արարման ժամանակը, գտնվելու տեղը և, որ ամենից կարևորն է, վիմագրության բովանդակությունը: Դրա փոխարեն միայն մերկապարանոց հայտարարվում է, որ հուշարձանն աղվանական է: Մինչդեռ լուսանկարների վրա հստակ նշմարվում են հայերեն տառեր, և դրանք առանց որևէ դժվարության կարդացվում են:

Այս բնագավառի նորաթուխ զեղծարարներից մեկի՝ Վ. Ալիևի հերթական «գիտական հայտնա-

գործությունը» մերկացրել է Հ. Սվազյանն իր «Մի «ալբանական» գրության մասին» հոդվածում[29]:

Կեղծիքը, սակայն, սրանով էլ չի ավարտվում: Ադրբեջանի մի շարք թանգարաններում պահվում և ցուցադրվում են հայ մշակույթի հազարավոր արժեքներ[30]: Այցելուներին դրանք ներկայացվում են գրեթե նույն կաղապարով: Բացատրագրերում նշվում է. «Քար ադրբեջանական հին գրությամբ»: Ահա քեզ գիտություն, թանգարանային արժեքների ուսումնասիրման ու մասսայականացման ադրբեջանական ձև:

Այսքանից հետո մեզ մնում է հիշեցնել կեղծարարներին, որ պատմությունը բնավ չի ճանաչում ստորադաս եղանակով կուացնել, խոնարհել, ձևափոխել փաստերը, իրողությունները: Քանզի ճշմարտությունը վաղ թե ուշ դուրս է գալու լույս աշխարհ, իսկ կեղծիքը նետվելու է աղբանոց:

***

Արցախի մշակույթի և ճարտարապետության մի նոր վերածնունդ սկսվեց XIX դ. սկզբներին, երբ 1805 թ. երկրամասն ինքնակամ ընդունեց Ռուսաստանի տիրապետությունը, որը հաստատվեց 1813 թվականի Գյուլիստանի ռուս-պարսկական հաշտության պայմանագրով:

Արևելյան Հայաստանի մի շարք մարզերի թվում Ղարաբաղում ևս մտցվեց ռուսական կառավարման համակարգ, որով և ժողովրդի առջև ծառացան նոր խնդիրներ. «Ընդգրկել նոր կյանք, հարմարվել նոր պայմաններին և առաջ տանել հոգեկան կարողությունների զարգացումն այն պայմաններում, որը տալիս էին փոփոխված հանգամանքները»[31]:

1868 թվականին Ելիզավետպոլի նահանգի մեջ մտան Ղարաբաղի տարածքում ստեղծված Շուշիի, Ջաբրայիլի, Ջիվանշիրի, մի փոքր մասով էլ Զանգեզուրի գավառները: Այս ամենը հանգեցրեց այն բանին, որ անցյալի գիրկը նետվեցին թուրքական, պարսկական և նրանց դրածոների՝ Շուշիի խաների ասպատակությունների ու վայրագությունների մոայլ ժամանակները:

Երկրամասը բռնեց կապիտալիստական զարգացման ուղի: Առանձնապես թափ ստացան առևտուրը, արհեստները ու մետաքսի արդյունաբերությունը: Ստեղծվեցին մի շարք խոշոր քաղաքատիպ՝ բնակելի և հասարակական շենքերով գյուղեր, ավաններ (Հոնաշեն-Հադրութ, Տող, Մեծ Թաղլար, Ճարտար, Ավետարանոց, Թալիշ, Գետաշեն), կառուցվեցին ճարտարապետական տեսակետից ներկայանալի եկեղեցիներ (ս. Հարությունը, Ամարասի նոր եկեղեցին, Թալիշի

[29] Մանրամասն տես՝ Հենրիկ Սվազյան, Մի «ալբանական» գրության մասին, «Լրաբեր», 1987, № 2, էջ 42—45։

[30] Մանրամասն տես՝ Ս. Բարխուդարյան, Ադրբեջանի պատմության թանգարանում պահվող հայկական հուշարձանների մեկի մասին, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1964 թ., № 1, էջ 61—64։

[31] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 59։

ս. Աստվածածինը, Գետաշենի եռանավ բազիլիկը, Շուշիի Ագուլեցոց, Մեղրեցոց եկեղեցիները), դպրոցներ, դղյակներ, կամուրջներ, ճանապարհներ:

Նոր պայմաններում բարգավաճում և համակովկասյան կյանքում ուրույն դիրք է գրավում Ղարաբաղի միակ քաղաքը՝ **Շուշին, ուր արդեն 1828 թվականից հայերեն գրքեր ու պարբերականներ էին հրատարակվում: Քաղաքն ուներ իր հռչակավոր թեմական դպրոցը (1838), Կուսանաց վանքը (1818), թատրոնը (1891), հիվանդանոցը (1900), ամառային և ձմեռային ակումբները, գործող վեց եկեղեցին և մշակութային-լուսավորական բազմաթիվ այլ հաստատությունները, հարյուրավոր արհեստանոցները, խանութները, շուկաները: 1847-ին ստանալով քաղաքի կարգավիճակ՝ Շուշին XX դարի սկզբին դարձավ հայկական մշակութային կյանքի առաջատար օջախներից մեկը, ազատամիտ ոգու ջահակիրը, ոսկեձեռիկ վարպետների, արիասիրտ հերոսների, անընկուն հեղափոխականների, գրականության և արվեստի նշանավոր շատ գործիչների ծննդավայրը:**

Հայաշունչ ու հայալեզու Շուշին, սակայն, առավելապես աչքի էր ընկնում իր քաղաքաշինական ինքնատիպությամբ, ճարտարապետական ծավալների ներդաշնակությամբ, պաշտամունքային և ժողովրդական կառույցների գեղեցկությամբ:

Շուշիի հանդիսավոր ճարտարապետության ավանդույթները հայկական են, կառուցողական ձևն ու ոճը տարածված են եղել ինչպես Արցախ-Ղարաբաղի, այնպես է հարևան Սյունիքի բնակավայրերում: Թե՛ բնակելի, թե՛ արտադրական և թե՛ հասարակական-մշակութային բնույթի կառուցվածքները պարզ ու արտահայտիչ են և գալիս են հայկական մոնումենտալ ճարտարապետությունից: Այս առումով հատկանշական է **Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ խոշոր չափերի փառահեղ** եկեղեցին (1868—1887): Այն և քաղաքի մյուս **Կանաչ ժամ (ս. Հովհաննես Մկրտիչ)** տաճարը (1847), ինչպես նաև **Առաքյոլի Մարիամ Աստվածածինը** (1902—1907), **Գանձակի** և **Բաքվի** հայկական եկեղեցիները (XIX դ. վերջ և XX դ. սկիզբ) կառուցելիս հայ շինարարներն օգտագործել են իրենց հին ավանդույթները և դրանով իսկ վերադարձել գմբեթավոր կառուցվածքների տիպին, որն ամենատարածվածն էր հայ ճարտարապետության նախորդ շրջաններում՝ VI—IX և XI—XIII դարերում: Հայ քարգործ վարպետները դրսևորեցին խոշոր ճարտարապետական գլուխգործոցներ ստեղծելու իրենց ձիրքը, որը քաղաքական ու տնտեսական դաժան ժամանակներում ժողովուրդը անթեղած կրակի պես պահել էր իր ներսում:

Միաժամանակ շեշտակի վերելք էր ապրում ու համահայկական մշակույթի գանձարանում ա-

ռանձնակի տեղ բռնում **Արցախի դեկորատիվ-կիրառական արվեստը:** Ժողովրդական, տնայնագործական արվեստի զարգացումը զգալի չափով պայմանավորված էր երկրամասի բնական հարստություններով և այնտեղով անցնող (արևելք-արևմուտք) ճանապարհներով: Արցախն արտահանում էր բնական մետաքս, գորգեր, կարպետներ, խուրջիններ, ոսկերչական և արծաթագործական զարդեր, գոտիներ, սափորներ: Արցախի մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: **1882 թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն-Հադրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ 1888 թ. ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի:** Տեղին է հիշել, որ XIX դ. վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները:

Դեռևս հին ժամանակներից սկսած՝ Արցախի հայկական գորգերը մեծ պահանջարկ են վ'այելում: Այդ են վկայում **աշխարհի բազմաթիվ թանգարաններում պահպանվող հայերեն արձանագրություններով հազարավոր գորգեր:** Արցախ-Ղարաբաղի գորգերը, իրենց մեջ ներառնելով հայկական գորգերին հատուկ կողմերը, ունեն նաև առանձնահատկություններ: Տիպական են ատամնաձև եզրերով ու խաչաձև հարդարանքներով շեղանկյունաձև մեծ զարդանախշերը, որոնք

շատ հաճախ լրացված են կենդանական պատկերներով՝ ամբողջացնելով տեսարանը և միաձուլվելով ընդհանուր կառուցվածքին: Խիստ բնորոշ են կարպետագործության ավանդույթները, որոնք կատարելագործվելով, շարունակվում են մինչև մեր օրերը: Կիրառական արվեստի մի առանձին ճյուղ է ասեղնագործությունը: Այն աչքի է ընկնում գունային երանգների և զարդապատկերների բազմազանությամբ:

Հարկ կա՞ հիշեցնելու Արցախ-Ղարաբաղի՝ մանավանդ կանանց զգեստների բացառիկ ինքնատիպությունը հայկական տարազների մեջ՝ հանդուգն ներկապանակով, նախշերի բազմաոիթմ ներդաշնակությամբ, որոնցում իրենց ստեղծագործողների էությունը կարդացվում է ոչ պակաս վճիտությամբ, քան ուրիշ հոգևոր ստեղծագործությունների մեջ:

Արցախի հայ ժողովրդական երաժշտական արվեստն ազգային ամբողջական երաժշտության ցայտուն հատվածներից է, կրում է նրա բազմադարյա ավանդույթները, ունի ոճական նույն ճյուղավորումները: Հատկապես նշանավոր են **Արցախի հորովելները, ճախարակի սրտառուչ երգերը, որոնցում դրսևորված են արցախցու սոցիալական կյանքի դժվարին պատկերները:**

Արցախի՝ Հայաստանի ինքնատիպ պատմաազգագրական նշանավոր մարզերից մեկի բանահյուսական հարուստ նյութերի ժանրային, մոտիվային, սյուժետային ու գեղարվեստաարտա-

հայտչական միջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հայ ժողովրդական բանահյուսության տեղական դրսևորումներ են:

***

Եթե փորձենք հակիրճ մի գնահատականի մեջ ամփոփել այս ամենը, ապա առաջին հերթին պիտի ընդգծենք այն իրողությունը, որ **անհիշելի ժամանակներից ի վեր հայ բնակչության կյանքն Արցախում չի ընդհատվել:** Օտար ասպատակիչների կողմից ավերի ու ավարի ենթարկված մի բնակավայրի տեղում կամ նրա կողքին կառուցվել է նորը: Խորտակված, քայքայված մի վանքի, եկեղեցու, բերդի, կամրջի փոխարեն ստեղծվել է մեկ ուրիշը: Նորերն են կառուցվել՝ առավել անմատչելի վայրերում, անտառի խորքում, բլրալանջերին, լեռան բարձունքին, չար աչքից հեռու:

Արցախ-Ղարաբաղի ազգային ինքնության վկայագրերը նրա տարածքով մեկ սփռված ավելի **քան 20 հազար պատմամարտարապետական հուշարձաններն են:** Այս թվերը հեռու են վերջնական լինելուց, քանի որ Արցախի ոչ բոլոր հուշարձաններն են ենթարկված պետական պատշաճ մակարդակի հաշվառման[32]: Հուշարձաններից շատերը երկար դարերի պատմություն ունեն և հայկական ընդհանուր մշակույթի անբաժան մասն են կազմում: Անցյալում հայերի ինքնապաշտպանության և գոյատևման համար մղված պայքարում իրենց անգնահատելի դերն են ունեցել ոչ միայն լեռնաստանի բերդ-ամրոցները, այլև վանքային խոշոր համալիրներ **Ամարասը**՝ IV դարի սկզբին, **Կատարովանքը**՝ նույն դարի կեսին, **Գտիչը, Վարազգոմը, Խտուդրեն**՝ IX դարի առաջին քառորդում, **Գանձասարը, Դադիվանքը**՝ XIII դարում **Տողը** և **Շուշին**՝ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին, իսկ **Մայրաբերդ-Ասկերանը**՝ XX դարի սկզբին:

Դարերի միջով մեզ հասած վանքային համալիրներում, նշանավոր եկեղեցիներում անգամ խավարի ու մղձավանջի պայմաններում անմար կրակի պես բոցկլտացել է ազգապահպանության անշեջ կրակը: Դրանք երկրամասում լուսավորություն և կրթություն տարածող առաջին օջախ-

---

[32] *Արցախում, ցավոք, բացակայում են անհրաժեշտ վերաբերմունքն ու հոգատարությունը հուշարձանների նկատմամբ: Դրանց վերականգնման ու պահպանության մասին իշխանության բարձրագույն մարմինների որոշումներն այստեղ կիրառություն չեն գտնում, Քանի դեռ Արցախը մնում է Ադրբեջանի կազմում, այս կարևոր գործում չեն կարող չառաջանալ դժվարություններ, արգելակումներ: Որովհետև Ադրբեջանի կառավարությունը չի հրաժարվել այն մտքից, որ արցախահայությանը պիտի վերադարձվեն նրանից խլված մշակույթը, պատմությունը, հոգևոր կյանքը: Այս արհեստական բարդությունները կվերանան, երբ Արցախը վերամիավորվի մայր Հայաստանին:*

ներն էին՝ հովանի գրչության ծաղկմանը: Այդ հուշարձանները միաժամանակ մեր նախնիների կերտած պատմության քարակերտ տարեգրություններն են, քարե մատյանները՝ իրենց վրա պահպանված հազարավոր հայերեն վիմագիր արձանագրություններով, որոնք գալիս են դարերից և արտացոլում սերունդների նյութական և հոգևոր կյանքը, երկրամասի բազմադարյա պատմությունը, նրա ժողովրդի հայրենասիրական ոգին, հարատևելու անսասան կամքը, ստեղծագործելու հանճարը:

Այս կոթողները ճարտարապետական այն հուշարձաններից են, որոնք իրենց սքանչելի արվեստով անջնջելի կնիք են դրել լեռնային երկրամասի դեմքին և զգալի չափով հարստացրել հայկական ազգային մշակույթը և մարմնավորել արցախյան ճարտարապետական դպրոցը: Այն զարգացել է միջնադարյան Հայաստանի ճարտարապետական մյուս դպրոցներին (**Անիի, Սյունիքի, Լոռու**) բնորոշ ընդհանուր օրինաչափություններով: Ինչպես, օրինակ, եկեղեցիների հորինվածքում գմբեթավոր-խաչաձև դահլիճների «ներգծված խաչի» կիրառումը, ճակատների հարդարումը դեկորատիվ կամարներով, կտիտորական քանդակներով ու շքամուտքերով, գավիթների ծածկերի իրականացումը փոխանցվող կամարներով: Միաժամանակ առկա են Արցախի ճարտարապետական դպրոցին բնորոշ առանձնա-

հատկություններ. եկեղեցիների հորինվածքներում միանավ դահլիճի (XII—XIII դդ. Հայաստանի այլ մարզերում այդ հորինվածքով կառուցվել են հիմնականում մատուռներ, վանքային համալիրների փոքր եկեղեցիներ) անհամեմատ լայն կիրառումը: Մյուս կարևոր առանձնահատկություններից է եկեղեցիներում ուղղանկյուն բեմի զանգվածային կիրառումը: Հատկանշական են նաև Արցախի խաչքարերն ու մահարձանները՝ կենցաղային մոտիվներով արված բարձրաքանդակների առատությամբ:

***

Այսուհանդերձ, երկրամասի, հատկապես նրա լեռնային գավառների գյուղացիությունը հողազուրկ էր և գտնվում էր ծանր դրության մեջ: Հալածվում էին ազգային մշակույթը, առաջադիմական գաղափարները: Հրահրվում էին ազգամիջյան ընդհարումներ:

Զրկանքն ու կարիքը գյուղի աշխատավորներին ստիպում էին թողնել հայրենի ոստանը և գնալ Շուշի, Բաքու, Անդրկասպյան երկրամաս՝ նավթահանքերում, գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատելու: Հայրենի երկրամասի հոգևորը թեթևացնելու այլ ճանապարհ ընտրեցին Եվրոպայի և Ռուսաստանի բանվորական կենտրոններում սովորող ղարաբաղցի մոլորված ուսանողները: Նրանց և արդեն պրոլետար դարձած երեկվա գյուղացու միջոցով մարքսիզմի գաղափարները դեռևս XIX դարի վերջին տարածվե-

ցին նաև Ղարաբաղում: Այսպես, 1891 թվականին Զրաբերդի Կուսապատ գյուղի դպրոցն անցկացրեց մայիսմեկյան առաջին տոնակատարությունը, 1897 թվականին հեղափոխական ակնավոր գործիչ Բոգդան Կնունյանցն ստեղծեց ՌՍԴԲԿ ղարաբաղյան առաջին խումբը: XX դարի սկզբին **Նոգի** գյուղում գործել է **ընդհատակյա տպարան**, որտեղ արտատպվել են **«Իսկրա»** թերթի առանձին համարներ և հեղափոխական բնույթի այլ գրականություն:

Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին **Վ. Ի. Լենինի** մերձավորագույն զինակիցների թվում կային երկու տասնյակից ավելի ղարաբաղցի պրոֆեսիոնալ հեղափոխականներ՝ **Բ. Կնունյանցը, Ա. Բեկզադյանը, Ս. Կասպարովը, Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը** և ուրիշներ:

XX դ. առաջին քառորդում Հայաստանի (այդ թվում նաև Արցախի) փրկության համար շատ բան արած ֆիդայիների շարքում կային նաև հայ ազգային-ազատագրական պայքարի զինված ջոկատների ղարաբաղցի հրամանատարներ՝ **Նիկոլ Դուման, Թուման Քեռին, Արտեմ Լալայանը, Թեվան Ստեփանյանը, Դալի Ղազարը, Ասլանիկը, Իշխանը** և ուրիշներ:

Այսքանից հետո, ինչպես ընդունված է, պետք է նշվի, որ աղքատության ու ստրկության դատապարտված ղարաբաղցիները մեծ խանդավառությամբ ընդունեցին Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգերի եղբայրական ընտանիքում,

«Ադրբեջանի կազմում ձեռք բերելով ազգային արժանապատվություն և նաև պետականություն»[33], մի չտեսնված ու չլսված արագությամբ նվաճեցին «զարգացած սոցիալիզմի» բարձունքները, որտեղից նրանց առջև ուր որ է բացվելու էր կոմունիզմի լայնահուն երջանկության պողոտան: Եվ այստեղ էլ պետք է դրվի վերջակետ: Մինչդեռ սա ընդամենը բարի ցանկություն է, խաբուսիկ տեսիլք, ինչու չասել, նաև խորհրդային պրոպագանդայի որդեգրած ճարտասանական անսքող կեցվածք:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՂԹԱ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 70 տարվա պատմությունը՝ ոչ միայն սոցիալիզմի, կոմունիստական գաղափարախոսության օգտին բնավ չխոսող փաստ է, այլև, անկասկած, կազմակերպված հանցագործությունների մի յուրօրինակ շղթա: Արցախահայության ապրած ողբերգությունները վկայում են, որ այս երկրամասում ոտնահարվում են մարդու ամենատարրական իրավունքները: Եվ ահա, գորբաչովյան վերակառուցման պայմաններում միայն արցախահայությունը հնարավորություն ունեցավ բացեիբաց հանդես գալու իր խեղված ճակատագիրը ուղղելու՝ մայր Հայաստանին միավորվելու արդարացի պահանջով:

---

[33] «Проблемы Мира и социализма», № 6, 1977, стр. 12.

Արդեն չորրորդ տարին է, որ Ղարաբաղը դարձել է կենտրոնական իշխանությունների «մտահոգության» հարցը, երկու հարևան հանրապետությունների միջև ստեղծված լարվածության օջախ, միջազգային հասարակայնության հիացմունքի և կարեկցանքի առարկա: Ուստի անհրաժեշտ է թեկուզև ընդհանուր գծերով ներկայացնել Արցախ-Ղարաբաղյան պրոբլեմի պատմությունը և այդ կապակցությամբ կենտրոնական իշխանությունների ընդունած այն որոշումները, որոնցով կենտրոնը փորձում է ապակողմնորոշել հասարակայնությանը, դրանով իսկ չլուծել քաջարի ժողովրդի արդարացի պահանջը:

Ե՞րբ է առաջացել Ղարաբաղի պրոբլեմը կամ ե՞րբ է սկսվել նրա հայ բնակչության ողբերգությունը: Այս հարցին պատասխանելու համար հարկադրված ենք **փոքր-ինչ հետ** պտտել ժամանակի անիվը՝ բացահայտելու այս պրոբլեմի արմատները, պրոբլեմ, որը գլորվող ձնագնդի նման գնալով մեծանում է: Բանն այն է, որ այսօր այստեղ տեղի ունեցող ողբերգությունները ուղղակիորեն կապված են 20-ական թվականների սկզբին Ղարաբաղի հարցում թույլ տրված ճակատագրական սխալի հետ: Այո, այս մարզում սերունդները փոխարինում են միմյանց՝ իրար հանձնելով ոչ միայն գործերը, այլև տառապանքը, հոգսերը, իղձերը և իրենց գոյության համար մղվող պայքարը:

***

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո Արցախ-Ղարաբաղում ստեղծվել էր լարված վիճակ, որն ավելի բարդացավ Անդրկովկասի սեյմի անկումից հետո: Անիշխանության դժվարին պայմաններում արցախահայությունը միասնական ճակատով ոտքի ելավ տնօրինելու իր ճակատագիրը:

1917 թ. դեկտեմբերի 16-ին Շուշիում ստեղծվեց Հայոց ազգային խորհուրդը, որը **1918 թվականի հուլիսի 22-ին վերակազմվեց Լեռնային Ղարաբաղի կառավարության:** Նրա վարած արտաքին և ներքին ինքնուրույն քաղաքականությունը վավերացված է Ղարաբաղի ժողովրդական ներկայացուցիչների այն ութ համագումարների **որոշումներում** ու **հռչակագրերում,** որոնք անցկացվել են 1918 թ. հուլիսից մինչև 1920 թ. փետրվարն ընկած ժամանակաշրջանում[34]:

Այդ տարիներին ղարաբաղցիների հիմնական պայքարն ուղղված էր 1918 թ. **Բաքվում ստեղծված մուսավաթական Ադրբեջանի նվաճողական քաղաքականության դեմ,** որն առաջին իսկ օրից, միջոցների մեջ խտրություն չդնելով, ձգտում էր տեր դառնալ Լեռնային Ղարաբաղին: Սակայն ոչ նրա տասնապատիկ գերազանցող ուժերը, ոչ

[34] *Մանրամասն տես՝ Հար. Թումյան, Դեպքեր Լեռնային Ղարաբաղում, 1917—1920 թթ. (պատմական ակնարկ), Երևան, 1965։*

թուրքական անմիջական օգնությունը և ոչ էլ վերջիններիս փոխարինած **անգլիացիների** նենգ ու խորամանկ ադրբեջանամետ քաղաքականությունը չկարողացան ծնկի բերել Արցախ-Ղարաբաղին: Այնուհանդերձ, մուսավաթականները հրահրեցին ազգամիջյան ընդհարումներ, ավերեցին բազմաթիվ գործարաններ, կտրտեցին այգիներ, հիմնահատակ կործանեցին հայկական մի շարք բնակավայրեր, հրդեհի ու կողոպուտի մատնեցին Շուշի քաղաքի հայկական թաղամասերը: Այդ ամենի մասին մեծ դառնությամբ է հիշել **Սերգո Օրջոնիկիձեն**, որն անձամբ տեսել է Շուշիի ավերակները: **«Այսօր ես սոսկումով եմ հիշում այն պատկերները, որ մենք տեսել ենք 1920 թ. մայիսին Շուշիում: Հայկական գեղեցիկ քաղաքը եղել է հիմնահատակ ավերված, կործանված»**[35]:

***

1920 թվականի մայիսին կարմիր բանակի օգնությամբ Ղարաբաղում հաստատվում են խորհրդային կարգեր: Բայց քանի որ ամբողջ Հայաստանի տարածքում չէ, որ ստեղծվել է խորհրդային իշխանություն, ուստի Ղարաբաղի պատկանելության հարցը առաջ բերեց սուր վեճեր: Ադրհեղկոմի ղեկավարները պահանջում էին, որ Ղարաբաղը միացվի Ադրբեջանին, իսկ **Գ. Չի-**

[35] Прием делегации Сов. Азербайджана руководителями партии и правительства в Кремле. Парг. издат. ЦК ВКП(б). 1936. с. 60 –63.

չերինը՝ ՌԽՖՍՀ արտաքին գործոց նախարարը, հետևապես նաև կենտրոնական իշխանությունը գտնում էին, որ հայկական Ղարաբաղ և Զանգեզուր մարզերը «...ոչ մի դեպքում չպետք է միացնել Ադրբեջանին: Նրանք պետք է զբաղեցնեն ռուսական զորամասերը, այլ ոչ թե ադրբեջանական: Նրանցում պետք է ստեղծել ռուսական օկուպացիոն իշխանություններ, այլ ոչ թե ադրբեջանական»[36]: Ս. Օրջոնիկիձեին հեռագրած Չիչերինի սույն հանձնարարականն ադրբեջանցի հրատարակիչները շրջանցել և, բնականաբար, չեն օգտագործել ԼՂԻՄ-ի հռչակման մասին Բաքվում 1989 թ. տպագրված գրքում:

Հայաստանում խորհրդային կարգերի ստեղծման (29 նոյեմբերի 1920 թ.) առթիվ Ադրբեջանի հեղկոմի նախագահ **Ն. Նարիմանովի** և արտաքին գործերի ժողկոմ **Մ. Հուսեյնովի** նոյեմբերի 30-ին հայ ժողովրդին հղված հեռագրով հայտարարվում է. **«այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած տարածքային վեճերը հայտնվում են վերացված»** և **«Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը ճանաչվում են Հայկական Խորհրդային Հանրապետության մասը»**: Հաջորդ օրն Ադրբեջանի կառավարության սույն հռչակագիրը քննարկվում և հաստատվում է **Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում: Այս մասին դեկտեմբերի 2-ին հայտնվում**

[36] ЦПА ИМЛ. при ЦК КПСС. ф. 64, оп. 2, д. 5, л. 18.

է Լենինին: Երկու օր հետո, դեկտեմբերի 4-ին, **«Պրավդա» թերթում** տպագրվում է **Ստալինի** կոչը՝ ուղղված հայ ժողովրդին: Այնուհետև ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն Նարիմանովի մասնակցությամբ իր 1921 թվականի հունիսի 3-ի նիստում միաձայն որոշում է. **«հաստատել Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին Հայաստանի կառավարության դեկլարացիան»**[37]: Սույն դեկլարացիան տպագրում է նաև «Բակինսկի բաբոչի» թերթը (22 հունիսի 1921 թ.):

Թվում էր, թե տարածքային վիճելի հարցերը մեկընդմիշտ կարգավորվեցին: Հույսեր էին փայփայվում, որ դրանով իսկ հնարավոր կլինի քանդել հայ-ադրբեջանական հարաբերությունները մթագնող հանգույցը: Բայց, ավաղ, Ադրբեջանի ղեկավարները, ոգեշնչված 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքված տխրահռչակ պայմանագրով (որով Հայաստանի մի մեծ մասը՝ Նախիջևանի երկրամասն անարդարացիորեն հանձնվեց Ադրբեջանին), կտրուկ շրջադարձ կատարեցին իրենց դիրքորոշման մեջ և արգահատելի պատճառաբանություններով հանդես եկան Հայաստանի տարածքների վերաձևման նոր պահանջներով: Եվ ահա, 1921 թվականի հուլիսի 4-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն վերստին անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի վարչատարածքային պատկանելության հարցին: Բյուրոն որոշում է երկրամասը միացնել Խորհրդային Հայաստանին[38]: Սակայն մեկ օր հետո բյուրոն, Նալչիկից Թբիլիսի անսպասելի ժամանած Ստալինի մասնակցությամբ, առանց քննության և քվեարկության, կամայականորեն հայկական մարզը հանձնեց Խորհրդային Ադրբեջանին, խոստանալով մարզին «ինքնավարության լայն իրավունքներ»: Դա պատճառաբանվեց այն սխալ հիմնավորմամբ, թե իբր «դա անհրաժեշտ է մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղություն հաստատելու համար, և որ դա է թելադրում Ադրբեջանի հետ Ղարաբաղի տնտեսական կապերի շահը»[39]:

Այնուհետև Լեռնային Ղարաբաղի հարցը լրվեց 1921 թվականի հուլիսի 7-ին տեղի ունեցած կուսակցության քաղբյուրոյի նիստում: Լենինի նախագահությամբ որոշվեց տարածքային վեճերը լուծելիս հիմք ընդունել էթնիկական գործոնը, ազգերի ինքնորոշման իրավունքը: Դարձյալ մեկ օր հետո՝ հուլիսի 8-ին, Ստալինը հեռագրում է Օրջոնիկիձեին և պարտադրում նրան «վիճելի հարցերը լուծել հօգուտ Ադրբեջանի և Թուրքիա-

[37] ЦПА ИМЛ, ф. 64, оп. 1, д. 1, п. 1, л. 77.

[38] **Нагорный Карабах (историческая справка)**, Ереван, 1988, с. 23—36.

[39] **В. Микаелян**, Л. Хуршудян, «Некоторые вопросы по истории Нагорного Карабаха», «Известия» АН Арм. ССР, Ереван, 1988, № 3, с. 43—56.

Ի դեպ, սույն որոշումն անվավեր ճանաչվեց ինչպես կուսակցության ԼՂԻՄ-ի մարզային կոմիտեի պլենումի (1.06.1988 թ.), այնպես էլ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի (14.02.1990 թ.) որոշումներով։

յի»[40]: Այս պարագայում էլ Ստալինը ղեկավարվել է իրեն հատուկ կամայականությամբ՝ ուժեղին բավարարելու, թույլին ճնշելու քաղաքականությամբ: Այսպիսով, լիովին անտեսվում են Լեռնային Ղարաբաղի բնակչության 94,4 տոկոս կազմող հայերի կամքը, պատմամշակութային ու ազգային-տարածքային գործոնները:

Քաղաքական անբարոյականության տիպիկ օրինակ հանդիսացող այս խաղում վճռորոշ դեր են ունեցել, ինչպես իրավացիորեն նկատել է ռուս մեծ գրող Ա. Սոլժենիցինը, հանձնյանալը սովետների սրտակից բարեկամին՝ Թուրքիային[41] և նրան «համաշխարհային հեղափոխության» մեջ ներքաշելու բոլշևիկների պարզունակ հաշվարկները: Գրեթե նույն միտքն է արտահայտել նաև Կենտրոնական Ասիայի գծով ֆրանսիացի մասնագետ Ռիլիվյե Ռոյը: Նա գրել է. «Ադրբեջանի կազմի մեջ Լեռնային Ղարաբաղը մտցնելու պատճառն այն է, որ Ստալինը ցանկանում էր

[40] Լ. Խուրշուդյան, *Վերակառուցումը և ազգային հարցի լուծման ուղիները, «Երևկոյան Երևան», 13 ապրիլի 1989, № 89։*

[41] Ալեքսանդր Սոլժենիցինը գրել է. «...այդ տարիներին բնավ էլ կարևոր չէր, թե սահմանները որտեղով կանցկացնես, ապա մի քիչ էլ և բոլոր ազգերը կձուլվեին։ Խորաթափանց Իլյիչ-առաջինը սահմանների հարցը անվանում էր «նույնիսկ տասներորդական»։ Այդպես էլ Ղարաբաղը կտրեցին, տվին Ադրբեջանին, ինչ տարբերություն, թե ում. այն պահին կարևոր էր հանձնանալ խորհուրդների սրտակից բարեկամին՝ Թուրքիային»։ Տես՝ նրա «Как нам обустроить Россию, «Комсомольская правда», 18 сентября 1990 г.

լավ հարաբերություններ պահպանել Աթաթուրքի Թուրքիայի հետ ու խաղի մեջ մտցնել մուսուլմանական խաղաթուղթը: Այսպիսով, նա դրսևորեց իր հովանավորությունը Ադրբեջանին, ի վնաս Հայաստանի շահերի»[42]: Այլ կերպ ասած, ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, իրականում այդ հեղափոխության շահերի զոհասեղանին են դրվել Հայաստանը և հայ ժողովուրդը:

Երկու տարվա քաշքշուկից հետո, **1923 թվականի հուլիսի 7-ին ստեղծվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը**[43], որը սակայն իր մեջ չէր ներառնում հայկական բոլոր գավառները, որոնք դարեր շարունակ կազմում էին մի միասնական ազգային-տարածքային միավոր: Նորաստեղծ ինքնավար մարզի վարչատարածքային վերաձևումներ կատարելիս նրանից մեխանիկորեն պոկեցին գրեթե կեսը. ամբողջ Հյուսիսային Արցախը, այժմ Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի և Շամխորի շրջանները՝ իրենց 107 հայկական գյուղերով հանդերձ: Փաստորեն անտես-

[42] «Արցախական», 27 դեկտեմբերի 1990, № 6, էջ 7։

[43] *Արցախահայության հանդեպ խտրականությունն սկսվել է արդեն իսկ ինքնավարության պաշտոնական վերանվանումից։ Երկրի բոլոր հանրապետությունները, ինքնավար մարզերը, բացի Արցախից և Նախիջևանից, կոչվում են բնիկ ժողովրդի անունով։ Եվ պատահական չէ, որ հայերի առաջին պահանջներից մեկը մարզը «Արցախի հայկական ինքնավար մարզ» վերանվանելն էր։*

վեց հայ բնակչության ինքնորոշման իրավունքն իր իսկ պատմական տարածքի վրա: Մասնատվեց նաև մշակույթը, որը ստեղծվել է հայ ժողովրդի մտքի ու բազկի ուժով: Այս անդամահատումը կատարվեց անհավատալի թեթևությամբ, քաղաքական խարդախ խաղով: Ճակատագրի դառն տնօրինությամբ այն, ինչ հնարավոր չէր անցյալում զենքի ուժով, իրագործվեց խորհրդային կարգերի հաստատումից հետո: Դեռ ավելին, որպեսզի հայկական մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ սահմանային անմիջական կապ չունենա, հայկական մի շարք բնակավայրեր, որ իրենց դիրքով ու նշանակությամբ կարևոր կապող օղակ էին Սյունիքի և Արցախի միջև, դարձյալ «մոգական» ուժով պոկեցին ինքնավար մարզից և բռնակցվեցին ադրբեջանական շրջաններին: Դրանով էլ չբավարարվեցին. ինչպես երևում է ԼՂԻՄ-ի կտրտված քարտեզից, մարզի մանավանդ կարևոր գետահովիտներում հայկական բնակավայրերի արանքում արհեստականորեն ստեղծված և դեպի մարզի խորքերը երկարաձգված լեզվակներից ու խոռոչներից, այդ հողակտորները մարզից զավթեցին այն հաշվով, որ Ստեփանակերտը կապ չունենա շրջկենտրոնների հետ (իր տարածքի շրջանակներում) և գյուղերից շրջկենտրոն հասնելու համար հարկադրված լինեն շրջանցել մարզի սահմանները: Նպատակը ԼՂԻՄ-ի վրա ճնշում գործադրելն էր, որ իրեն զգացնել տվեց 1988—1991-ական թվականներին, ղարաբաղյան հայտնի իրադարձությունների ժամանակ, երբ Ադրբեջանը փակեց այդ լեզվակներով ու խոռոչներով անցնող ճանապարհները, մարզը զրկելով ոչ միայն արտաքին, այլև ներքին հաղորդակցության միջոցներից: Սա էլ կարծես քիչ համարելով, մարզի տարածքից նոր հողակտորներ պոկելու ուրիշ ելք էլ գտնվեց: ԼՂԻՄ-ի տարածքում առանձնացրին (ներճանապարհային հանգույցներում գտնվող) ադրբեջանական չորս (10—30 բնակիչ ունեցող) գյուղակ և վարչականորեն ենթարկեցրին հարևան ադրբեջանական շրջաններին: Իսկ Անդրֆեդերացիայի վերացումից հետո հայկական Հադրութի շրջանից պոկեցին հայկական Հողեր և Հարար գյուղերը և կցվեցին ադրբեջանական Ֆիզուլու և Լաչինի շրջաններին: Սա էլ համարվեց անբավարար: Եվ ահա, 1950—1970-ական թվականներին տնտեսությունները խոշորացնելու առիթը Ադրբեջանի ճարպիկ ղեկավարներն օգտագործեցին իրենց հայատյաց ծրագրերն իրականացնելու համար: Նախ, նրանք անհրաժեշտ գտան Հայաստանամերձ հայկական յոթ գյուղ բռնի դատարկել և բնակիչներին ցիրուցան անել: Ասենք, որ այդ գյուղերից յուրաքանչյուրում ապրում էր 500—700 հայ բնակիչ, որոնք միավորված էին առանձին կոլեկտիվ տնտեսություններում: Հետո կատարվեց ավելի վատթարագույնը: Հայկական գյուղերից խլվեցին ընդարձակ հողահանդակներ և հանձնվեցին մարզում բնակեցված ադրբեջան-

ցիներին: Գյուղերի խոշորացման ժամանակ հաշվի չառնվեցին ոչ բնակլիմայական պայմանները, ոչ պատմական և ոչ էլ ազգային գործոնները, ամեն ինչ իրագործվեց հակահայկական վայրագություններով, որի հետևանքով Արցախի քարտեզից վերացան հարյուրավոր հայկական բնակավայրեր:

Մարզին վերապահված «կենսական տարածքից» մի քանի կտորներ էլ Բ. Կևորկովն իր բարերարի՝ Հ. Ալիևի «խնդրանքով» 1980-ական թվականներին նվիրաբերեց հարևան ադրբեջանական շրջաններին: Այսպես ձևեցին ու կարկատեցին ԼՂԻՄ-ի վարչական քարտեզը, որը գնալով շագրենու կաշվի նման նվազում ու նվազում է: Ի՞նչ է սա. տակտիկական քա՞յլ, թե ստրատեգիական նկատառում: Ստացվում է, որ Հայկական ԽՍՀ կողքին կարելի է ստեղծել հայկական ինքնավար մարզ, նրան սահմանակից էլ հայկական առանձին շրջաններ և Ադրբեջանի տարբեր մասերում գտնվող հարյուրավոր հայկական այլ գյուղերի հետ միասին հպատակեցնել Ադրբեջանական ԽՍՀ-ին, իսկ ադրբեջանական չորս փոքրիկ գյուղեր չէր կարելի թողնել Ադրբեջանին ենթակա հայկական մարզի կազմում: Այսպիսին է եղել զորանոցային սոցիալիզմի բուն էությունը, «մահմեդականների ու հայերի միջև ազգամիջյան խաղաղություն հաստատելու» բոլշևիկների գործելակերպը:

Հայկական տարածքները յուրացնելու ծրագրի

մեջ արցախահայությունն իրավացիորեն տեսնում է իր ազգային կյանքի, դարավոր մշակույթի վերացման իրական վտանգը: Բացի այդ արգելվում էր հայկական պատմական տեղանունների օգտագործումը: Հարցը, սակայն, միայն սահմանային «ճշտումներով» չէր ավարտվում: Հետագայում, հատկապես 60-ական թվականներից ըսկըսած, խնդիր դրվեց մարզի խորքերում՝ կենտրոնական հատվածներում վերաբնակեցնել զգալի քանակությամբ ադրբեջանցիների: Այդ նպատակով մարզում հապշտապ ստեղծվեցին 20-ից ավելի նոր բնակավայրեր, որոնցում արտոնյալ պայմաններով բնակություն հաստատեցին դրսից եկած ադրբեջանցիները:

Այսօր ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այս ամենի դեմ հայերի դժգոհությունները ու բողոքները Մոսկվան անհասկանալի կերպով անտեսում էր և դեռ ավելին՝ բողոքները վերադարձվում էին նրանց, ում դեմ ուղղված էին դրանք: Սովորաբար, որպես կանոն, բողոքները դիտվում էին որպես «բուրժուական ազգայնամոլության» դրսևորում, և նրանց հեղինակները ենթարկվում էին դաժան հետապնդումների:

Ահա թե որտեղ պետք է փնտրել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի ակունքները, որ հետագա տասնամյակներին, մանավանդ Անդրֆեդերացիայի վերացումից հետո էլ ավելի սրվեց և մեր օրերում վերածվեց **Արցախյան շարժման:**

ԼՂԻՄ-ի ազգային տարածքը կողոպտվելուց հետո էլ գործնական քայլեր չձեռնարկվեցին ոչ մի-

այն սահմանադրությամբ կամ պետական որևէ այլ միջոցառումով նախանշելու ինքնավար մարզի կարգավիճակը՝ խոստացված «լայն իրավունքները», այլև նույնիսկ խոսք չեղավ հանրապետության և նրա կազմում թողնված ազգային առանձին՝ Ղարաբաղի կազմավորման միջև հաստատվելիք փոխգործակցության մասին: Այսպիսի անորոշության, ավելի ճիշտ՝ իրավազրկության պայմաններում, բնականաբար, մարզի ճակատագիրը տնօրինելու գլխավոր մեխանիզմը եղել են և մնացին խտրականությունը, կամայականությունը, վարչահրամայական գործելակերպը: Նման կարգը Բաքվում ընդունվեց ծափահարություններով, իսկ ԼՂԻՄ-ին բերեց նորանոր ավերածություններ, ողբերգություններ, և իրավիճակն, ի վերջո, հանգեցրեց մարդկային և ազգային կյանքի խաթարմանը, հիվանդագին երևույթների ընկզբնավորմանը:

ԼՂԻՄ-ի կյանքի բոլոր բնագավառներում արմատավորված ծայրաստիճան աղետալի վիճակը վկայում է, որ ռեգիոնում իրականացված քաղաքականությունն ունեցել է մի անքող նպատակ՝ հնարավորին չափ արգելել մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը[44], ոտնահարել հայ բնակչության շահերը, ստեղծել անտանելի վիճակ և դրանով իսկ արագացնել մարզից հայերի դուրսմղումը: Հայերը, որ 1923-ին, ինքնավարություն

[44] «Социалистическая индустрия», 30 апреля 1989 г.

հռչակելիս, կազմում էին բնակչության 94,4 տոկոսը, 1979 թ. մարդահամարի տվյալներով ոչ միայն չէին ավելացել, այլև 18,7 տոկոսով պակասել էին: Նշված ժամանակաշրջանում հայկական մարզի քարտեզից վերացավ 47 հայկական գյուղ: Փակվել ու ավերվել են 44 բնակավայրում գործող 54 արդյունաբերական ձեռնարկություն: Կտրատվել և արմատահան են արվել հազարավոր հեկտար շահութաբեր այգիներ, էռոզիայի ենթարկվել վարելահողերի և արոտավայրերի ըզգալի մասը:

Խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղում չի կառուցվել հացամթերքների և ոչ մի ձեռնարկություն, որտեղ կարելի կլիներ պահեստավորել և վերամշակել ամեն տարի մարզում արտադրվող ավելի քան 100 հազար տոննա բերքը: Չի կառուցվել համակցված կերերի գործարան: Մարզը չունի երկաթբետոնե իրերի սեփական արտադրություն, տնաշինական կոմբինատ և այլն:

Դրությունն առավել ողբերգական է ազգային մշակույթի բնագավառում: Գոյություն ունեցող շուրջ 600 եկեղեցիներից ու վանքերից չէր գործում և ոչ մեկը (160 հազար հայ բնակչության առկայության դեպքում): Այսօր դժվար է չափել այն կորուստները, որ հայ մշակույթը կրել է մշտական արգելքների ու հետապնդումների հետևանքով: Իսկ ինչքա՞ն են այն կորուստները, որ հաճախակի հասցվել են մարզին՝ նրա մտավո-

բականության ոչնչացման ու դուրսմղման հետևանքով: Հայկական մշակութային ամբողջ ժառանգությունը համարյա թե թաքցված է եղել մասսաներից: Հայկական մարզի պատմության ու մշակույթի հարցերը մեկնաբանելիս Բաքվում միշտ ելնում էին 30-ական թվականներից արմատավորված «այն ամենը, ինչ գտնվում է Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում, պատկանում է ադրբեջանցիներին» սկզբունքից: Փաստերի կանխամտածված քողարկման, ենթագիտակցման ճանապարհով սիստեմատիկաբար կեղծում էին Արցախ-Ղարաբաղի պատմությունը, կամայականորեն որոշում հուշարձանների ազգային պատկանելությունը: Մի սերնդի աչքի առաջ, օրը ցերեկով, կողոպտում էին արցախցիների պատմությունը, ազգային հարուստ մշակույթը:

Արցախահայությունը զրկված էր իր պատմության, մշակույթի կամ թեկուզ առօրյա կյանքի մասին որևէ ուղեցույց, գրքույկ, ուսումնասիրություն հրատարակելու, թանգարաններ ստեղծելու, պեղումներ կատարելու, հուշարձանները վերականգնելու, ազգային տոները նշելու հնարավորությունից: Դպրոցներում արգելված էր հայ ժողովրդի պատմության դասավանդումը: Բարձիթողի վիճակում էր անցյալի արժեքների պահպանությունը: Պարզապես արցախցիների ձեռքերը կաշկանդված էին, լեզուները՝ սեղմված ատամների արանքում: Բաքուն հանախակի լույս աշխարհ էր հանում չփաստարկված, գիտական տեսակետից կեղծ տեսություններ, առաջ քաշում բոլորովին հիմնազուրկ հայացքներ և այդ ամենը ներկայացնում որպես Արցախ-Ղարաբաղի պատմություն: Իսկ երբ որևէ մեկը փորձում էր դրան պատասխանել, տեղնուտեղը նրան պիտակավորում էին ժամանակի մտայնությանը խորթ «իզմերով»:

Սկսած 1920-ական թվականների վերջերից պլանային կարգով Արցախից և հանրապետության այլ հայաշատ շրջաններից ամեն տարի հազարավոր հայ երիտասարդներ էին հավաքագրվում Բաքվի արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում մշտական աշխատելու համար: Հետագայում, մասնավորապես 1940—1958 թթ. ՖԶՕ-ներում՝ ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներում, բանվորական կադրերի պատրաստման վեցամսյա կուրսեր էին քշում ոչ միայն Արցախի գյուղերի պատանիներին, այլև աղջիկներին: Հրահանգը՝ պլանը վերևից էր: Բաքուն ըստ պառնում էր, որ պլանը պետական օրենք է, այն պետք է անվերապահորեն կատարել: Հարկավոր էր կառուցել Բաքուն, Սումգայիթը, Մինգեչաուրը, Կիրովաբադը: Տասնյակ հազարավոր հայեր զոհ գնացին այդ զարհուրելի արտագաղթին, դատարկվեցին Արցախի շատ գյուղեր: Գնացին կառուցեցին, որպեսզի «գործն ավարտված համարելով»՝ բռնագաղթի դաժան օրենքներով, հրով ու սրով դուրս անեին իրենց իսկ ձեռքերով կա-

ռուցված քաղաքներից: Եվ եթե Բաքվում չլինեն հայերի կառուցած շենքերը, ապա այդ քաղաքը նման կլիներ «նախալստրոյի» և միկրոշրջանների քաղաքի: Նույնը կարելի է ասել նաև Շուշիի, Գանձակի (Գյանջայի), Սումգայիթի, Մինգեչաուրի և մյուս քաղաքների մասին:

Մի կողմից Արցախ-Ղարաբաղից դուրս էին մղում բանվորական կարող ուժերը, մյուս կողմից դրա հետևանքով երկրամասում առաջացած աշխատուժի խիստ պակասը լրացնում ադրբեջանական շրջաններից արտոնյալ պայմաններով «հրավիրված» անասնապահներով: Մի խոսքով, Բաքվի խարդավանքը հետապնդում էր երկու նպատակ: Առաջին՝ հայաթափ անել Արցախը և երկրորդ՝ այնտեղ բնակեցնել ադրբեջանցիների: Արդյունքն առավել քան շոշափելի է: Եթե հետպատերազմյան 45 տարիների ընթացքում ԼՂԻՄ-ի հայերը գրեթե չեն աճել, ապա ադրբեջանցիներն ավելացել են ավելի քան 3,5 անգամ: Իզուր չի Հեյդար Ալիևն Ադրբեջանի խորհրդարանում (7 փետրվարի 1991 թ.) հպարտությամբ հայտարարել, որ իր իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի ադրբեջանացման ծրագիրն ավելի հաջողությամբ է կատարվել[45]:

Կարելի է հազարավոր օրինակներով ցույց տալ, թե ինչպես Բաքվում կազմված ու հաստատված կասկածելի պլան-առաջադրանքների պարտադրումով արցախահայությունից քամում էին նրա

[45] «Խարհրդային Ղարաբաղ», 13 փետրվարի 1991 թ.

վերջին հյութերը: Առավել անարդար է, եթե չասենք զայրացնող այն հանգամանքը, որ ինչքան խեղճ էին ապրում ղարաբաղցիները, այնքան գունագեղ էր ներկայացվում նրանց ապրելակերպը: Որքան հետընթաց էր ապրում ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական կյանքը, այնքան ավելի շատ էին ճառում նրա բարգավաճման ու ծաղկման մասին: Ընդ որում, այդ ճառերը զարդարվում էին ժողովուրդների բարեկամության և ինտերնացիոնալիզմի պերճախոս լոզունգներով:

Մեր երկրի ամենաբարձր ղեկավարի բնորոշմամբ՝ ԼՂԻՄ-ի հանդեպ **«անմարդկային վերաբերմունքը»**[46] **ներկայացվում էր որպես «ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի ղեկավարների** ցուցաբերած հայրական հոգատարություն»:

Հնարավոր չէ ամբողջությամբ բացահայտել բոլոր այն ոճրագործությունները, որոնք հայկական Ղարաբաղում կատարվել են Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիների ընթացքում: Հայկական մարզի բնակչության 35 տոկոսը (3—5 անգամ շատ, քան հարևան ադրբեջանական շրջաններից) քշվեց ռազմաճակատ[48], իսկ 1949 թ. հունիսի 14-ի գիշերը 24,5 հազար բոլորովին անմեղ արցախցի հայեր աքսորվեցին Ալթայի երկրամաս: Նույն 49-ի դեկտեմբերի վերջին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի կարգադրությամբ պատառոտվեցին արցախահայերի անկողինները և դրանցից հանված 200

[46] «Коммунист», 19 декабря 1988 г.

տոննա բրդով «փակեցին» Ստալինի ծննդյան պատվին ստանձնած բրդի արտապլանային առաջադրանքը[49]:

Այսօր դժվար է մեկ առ մեկ թվարկել այն բոլոր հանցագործությունները, կեղեքումները, որոնք կանխամտածված կիրառվել են Արցախում, նրա արմատական հայ բնակչության նկատմամբ: Անհնար է ընթերցողներին նույնությամբ ներկայացնել անմարդկային բոլոր այն վայրագությունները, որոնց հետևանքով զոհվել են տասնյակ հազարավոր անմեղ, խորհրդային կարգերին անսահմանորեն նվիրված մարդիկ: Անհնար է պարզել բարբարոսական բոլոր խոշտանգումները, առավել ևս դժվար է կազմել բոլոր նրանց ցուցակները, ովքեր կամայականորեն տանջահար լի-

[48] *Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945 թթ.) ԼՂԻՄ-ից զորակոչվել և ռազմաճակատ է ուղարկվել 45056 մարդ, որից 1850-ը՝ կին և աղջիկ: Պատերազմին մասնակցած ղարաբաղցիների միայն 3 տոկոսն էին ադրբեջանցիները (թեև նրանք կազմում էին մարզի ազգաբնակչության 10 տոկոսը): Պատերազմում զոհվեցին ավելի քան 22 հազար ղարաբաղցիներ: Նուրջ 15 հազար մարտիկներ պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով, 21 հոգի (որից 20-ը՝ հայ) արժանացել են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման, 6-ը՝ դարձել Փառքի երեք աստիճանի ասպետներ, 23-ը՝ գեներալներ: Անդրկովկասի բոլոր մարշալներն ու ադմիրալները (Հ. Ք. Բաղրամյանը, Ա. Ք. Բաբաջանյանը, Ա. Ն. Խամփերյանցը (Սերգեյ Խուդյակովը), Հ. Ս. Իսակովը նույնպես Արցախ-ղարաբաղյան ծագում ունեն:*

[49] Շահեն Մկրտչյան. *Արցունքներով լվացված բուրգ, «Գրական թերթ», 23 մարտի 1990 թ.:*

նելով նահատակվել են, ովքեր մի կտոր հաց գտնելու հույսով պանդխտության ճամփան են բռնել, ովքեր չարամտորեն զրպարտվել և հայրենի երկրամասից առմիշտ դուրս են քշվել: Անհնար է մանրամասնորեն շարադրել բոլոր այն ավերածությունները, հոգեկան նսեմացումները, որոնց պարբերաբար ենթարկվում են Ղարաբաղը և նրա հայ բնակչությունը: Միթե ցեղասպանություն չէ, երբ ստեղծվում են այնպիսի անտանելի պայմաններ, որոնց դեպքում մարզի հայ բնակչության մեծ մասը՝ 10-ից 9-ը ստիպված հեռանում է հայրենի օջախից: Մի՞թե հնարավոր է ներկայացնել հազարավոր այրիացած կանանց, որբացած երեխաների, որդեկորույս ծերունիների քաշած տառապանքները, թափած արցունքները, նրանց չարքաշ ապրուստի աղբյուրները (տնտեսության բնապատմական շահութաբեր ճյուղերի) ոչնչացնելու պատճառով արտահայտված հառաչանքները:

Ահա թե ինչու Լեռնային Ղարաբաղի պարագայում սխալ է պնդել, թե ղարաբաղցիների պահանջը սոսկ հետևանք է սոցիալ-տնտեսական սխալ քաղաքականության: Ճիշտ կլինի ասել, որ սոցիալ-տնտեսական սխալ քաղաքականությունը, որ **ԼՂԻՄ-ում հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկու վկայությամբ մարզը դարձրել է Խորհրդային Միության «ամենաբարձիթողի անկյունը»[50], եղել է հենց «ազգային խտրական**

[50] «Правда», 15 января 1989 г.

քաղաքականության»[51] արտահայտություններից մեկը: Իսկ խտրականության սկզբնապատճառը ԼՂԻՄ-ի արմատական բնակչության՝ հայերի ինքնորոշման իրավունքի հանիրավի ոտնահարումը է:

Այսպիսով, Արցախ-Ղարաբաղի պրոբլեմը ծագել է ոչ թե դատարկ տեղում, այլ ունի խոր արմատներ, և պահանջվում է ազգերի ինքնորոշման քաղաքականության դիրքերից բխող արդարացի լուծում: Հայկական մարզի բնակչության մի քանի սերունդ փորձել են հասնել դրան: Բայց միայն վերակառուցումը թույլ տվեց ցավոտ պրոբլեմի մասին խոսել ամբողջ ձայնով: Խորհրդային կենտրոնական զանգվածային լրատվական միջոցների մեղքով, դժբախտաբար, շատ քչերը հասկացան, որ ղարաբաղյան շարժումը վերակառուցման քաղաքականության ծնունդն է և ինչպես նշել է Անդրեյ Սախարովը, դրանք շաղկապված են միմյանց և հաղթելու կամ պարտվելու են միասին:

Երկրում սկսված «բարեփոխությունները» հույս ներշնչեցին արցախցիներին, և նրանք պատգամախոսների մի քանի խմբեր ուղարկեցին Մոսկվա, 120 հազար ստորագրությամբ խնդրագիր հղվեց Մ. Գորբաչովին՝ Արցախը գերությունից ազատելու պահանջով: Միաժամանակ ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդն իր **1988 թվականի փետրվարի 20-ի նիստում** ընդունեց (ԽՍՀՄ պատմությանմեջ անանախադեպ) որոշում[52], որով ԼՂԻՄ-ը ինքնորոշվում էր՝ **Ադրբեջանի կազմից մայր Հայաստանի կազմ մտնելու պահանջով:** Մնում էր, որ կենտրոնը հաստատի սույն որոշումը, և դրանով կլուծվեր հարցը: Բայց, ավաղ, ակնհայտորեն զգացվեց, որ կենտրոնը բնավ մտադրություն չունի հրաժարվելու ազգային հարցի լուծման ստալինյան տխրահռչակ քաղաքականությունից: Դրա պերճախոս վկայությունն է **քաղբյուրոյի 1988-ի փետրվարի 21-ին հապշտապ ընդունած որոշումը[53],** որով Արցախի հայության ազգային-ազատագրական ազնիվ շարժումը որակվեց «էքստրեմիզմ»; «նացիոնալիզմ», և ինչպես ցույց տվեցին հետագա դրամատիկ դեպքերը, մի չտեսնված համառ հետևողականությամբ ամեն բան արվեց, այդ գնահատականը հաստատելու համար: Սակայն զգալով, որ արցախյան շարժումը գնալով ծավալվում է և աստիճանաբար ձեռք բերում միջազգային արձագանք, երկրի Գերագույն խորհուրդն ստիպված տեղի տվեց: **1988-ի հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը,** 70 տարիների ընթացքում առաջին անգամ, պետական մակարդակով անդրադարձավ ԼՂԻՄ-ի հիմնահարցին և այդ կապակցությամբ ընդունեց հրամանագիր: Պաշտոնապես արձանագրվեց, որ, իրոք, **«մարզում երկար ժամանակ չեն լուծվել հայ բնակչության ազգային**

[51] «Խորհրդային Ղարաբաղ», *23 մարտի 1989 թ.*

[52] «Խորհրդային Ղարաբաղ», *23 փետրվարի 1988 թ.*

[53] «Правда», 22 февраля 1988 г.

շահեր շոշափող շատ հարցեր, հատկապես մշակույթի, կրթության ոլորտներում և կադրային քաղաքականության մեջ: Խախտվել են ինքնավար մարզի սահմանադրական իրավունքները: Այդ բոլոր բացասական երևույթները ոչ միայն ժամանակին չէին վերացվում, այլև կուտակվում էին»[54]: Այսուհանդերձ, նախագահությունը քաղբյուրոյի որոշումից հետո չգնաց: Մի կողմից, փաստորեն արձանագրվեցին ԼՂԻՄ-ի նկատմամբ կիրառված անմարդկային ոտնձգությունները, մյուս կողմից, ըստ էության, նորից վավերացվեց ճորտատիրական **իրավունքի** սկզբունքը: Հայերին **ստիպեցին հաշտվել** իրենց ստրկական վիճակի հետ: Եվ **պատահական չէ, որ հրամանագրի** ընդունումից հետո նոր թափով բորբոքվեցին ազգամիջյան հարաբերությունները մարզում և նրա շուրջը, որոնք դարձան մարդկային նոր զոհերի և նոր տեղահանությունների պատճառ:

Դարձյալ քննարկման դրվեց ԼՂԻՄ-ի հարցը: Հույսեր էին տրվում, թե Ղարաբաղի հիմնահարցի լուծման ճանապարհին մի կարևոր առաջընթաց քայլ պիտի դառնա **ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության այն հրամանագիրը[55], որով 1989-ի հունվարի 20-ից մարզում մտցվեց կառավարման հատուկ ձև:** Նախ, պարզվեց, որ այդ հրամանագրի իրավական հիմքերը խախուտ են և, ապա, կառավարման հատուկ ձևով փաստորեն լուծարվեց ԽՍՀՄ քաղաքական հիմքը ԼՂԻՄ-ում, այսինքն՝ վերացվեց խորհրդային իշխանությունը մարզում:

Սակայն ռեգիոնում լարված իրադրությունը բնավ չհանդարտվեց, և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը նորից անդրադարձել է ԼՂԻՄ-ի հարցին: **1989-ի նոյեմբերի 29-ի որոշմամբ[56]** Լեռնային Ղարաբաղը կրկին բռնությամբ «վերադարձվեց» Ադրբեջանական ԽՍՀ ենթակայությանը, հակառակ մարզի բնակչության կամքին, որը հստակ արտահայտված է ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի **1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև բնակչության լիազոր ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում:**

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի սույն որոշումը, բնականաբար, հայ ժողովրդի կողմից որակվեց որպես իր նկատմամբ բռնության նոր ակտ:

Հենվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, **Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989 թվականի դեկտեմբերի 1-ի համատեղ նիստում որո-**

[54] «Правда», 19 июля 1988 г.
[55] «Правда», 15 января 1989 г.
[56] «Правда», 30 ноября 1989 г.

շեցին Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ի հետ[57]:

Ցավոք, սույն որոշումը նույնպես իշխանության կենտրոնական մարմինները կոպտորեն մերժեցին:

Ղարաբաղյան շարժումը Խորհրդային Միությունում եղավ դեմոկրատիայի առաջին ծիծեռնակը, նրա միջոցով արթնացան ուրիշ ժողովուրդներ: 1988 թվականի գարնանը Ստեփանակերտում կարելի էր տեսնել Ռուսաստանից, Ուկրաինայից, Բալթիկայից, նույնիսկ Մոսկվայից ու Լենինգրադից եկած շիկահեր մարդկանց խմբերի, որոնք եկել էին ուսումնասիրելու, ապա իրենց մոտ տարածելու Ղարաբաղյան շարժման փորձը: Նրանք ապշել էին ցույցերի ելած մարդկանց կարգապահությունից, զսպվածությունից, հարցերի լուծման դեմոկրատական սկզբունքները պահելու կարողությունից:

Մեծ հումանիստ Անդրեյ Սախարովը նույնպես եղել է Արցախ-Ղարաբաղում, նրա մայրաքաղաք Ստեփանակերտում: Նա տարբերություն չէր դնում 1968-ի Չեխոսլովակիայի և 1988-ի Լեռնային Ղարաբաղի միջև, Բեռլինի պատի ու Լաչինի ճանապարհի միջև, Մերձբալթիկայի ու Արցախի ինքնորոշման իրավունքների միջև: Քանզի Արցախն իր մայր ժողովրդից բաժանել են միայն քարտեզով, որոշումներով, բայց հոգով, սրտով, երազանքներով, ուրախություններով, կենաց ու

[57] «Սովետական Հայաստան», 3 դեկտեմբերի 1989 թ.

մահու պայքարով նրանք միշտ միասին են եղել, և դա հայ ժողովրդի սրբազան իրավունքն է:

Այո, արցախյան ազատագրական հուժկու շարժումը շատ ազգերի համար ընդօրինակման դաս եղավ, նրանց դուրս հանեց լեթարգիական քնից, ափնակոծեց Արևելյան Եվրոպան, Մերձբալթիկան, և նրանք անկախություն ձեռք բերեցին, մինչդեռ արցախցիների ճիչը մնաց «ձայն բարբառո անապատի»:

Ամփոփենք: Վերջին երեք տարվա ընթացքում (1988 թ. փետրվարից մինչև 1990 թ. վերջը) Արցախի պրոբլեմի կապակցությամբ ընդունվել են 7 միութենական որոշում (չհաշված այն բազմաթիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի պետական իշխանության ու կառավարման մարմինների կողմից): Սակայն, ինչպես նշված է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1990 թ. հունվարի 15-ի հրամանագրում, **«ինքնավար մարզում և նրա շուրջը տիրող իրադրությունը ոչ միայն չի նորմալանում, այլև շարունակում է վատանալ»[58]:**

Պատճառն այն է, որ, ինչպես իրավացիորեն գրել է գերմանացի գիտնական Թեսա Հոֆմանը, խորհրդային կենտրոնական իշխանությունը հայկական պահանջների ամբողջ համալիրը շարունակաբար զոհաբերել և զոհաբերում է խորհրդային արտաքին քաղաքականության «բարձրա-

[58] «Правда», 15 января, 1990 г.

գույն» համադրություններին և ԽՍՀՄ ժողովուրդների «ինտերնացիոնալիզմի և եղբայրության» կարգախոսներին[59]:

Բնութագրական է նաև ամերիկյան «Թայմ» թերթի 1989 թ. հոկտեմբերի 23-ի հոդվածը: Նշելով, որ Արցախի համար պայքարում են և՛ Հայաստանը, և՛, որքան էլ զարմանալի թվա, Ադրբեջանը, թերթը եզրակացնում է. «Դա, հիրավի, տարօրինակ պայքար է: Մի կողմն իրավացիորեն պահանջում է վերադարձնել այն, ինչն իրավունքով իրեն է պատկանում, իսկ մյուսը կատաղորեն դիմադրելով, կեղծիքի ամրոցներ է կառուցում՝ ոչնչից չխորշելով, ընդհուպ մինչև քաղաքական հանցագործությունը՝ շրջափակումը: Բայց որքան էլ տարօրինակ է, մրցավարը մինչև հիմա բարեհաճ է կիսալուսնի խորհրդանշանով կանաչ անկյունում նստած բռնցքամարտիկի հանդեպ»: Կարծում եմ, ապարդյուն է ասված:

***

Իրադրությունը ԼՂԻՄ-ում հասել է լարման գագաթնակետին: Կենտրոնը Ադրբեջանի իշխանությունների հետ մեկտեղ հետևողականորեն իրա-

[59] *Արցախի և նրա ցավոտ պրոբլեմի մասին մանրամասն տես՝ Թեսա Հոֆման, Տանկերը վերակառուցման դեմ։ Փաստաթղթեր Արցախում և նրա շուրջ բախման մասին, Բերմեն (ԳՖՀ), 1989 (գերմաներեն)։ Սույն գրքի վերաբերյալ գրախոսական է տպագրվել «Գրական թերթի» 1990-ի մարտի 16-ի համարում։*

կանացնում է տեղոր Արցախի հայ բնակչության նկատմամբ, որն անհավասար պայքար է մղում հանուն ինքնորոշման իր իրավունքի ու այդ պայքարի ընթացքում կրել է բազում մարդկային կորուստներ: Հայկական մարզում հաստատված է դաժանագույն ռազմական դիկտատուրա[60], որը զենքի ուժով փորձում է ծնկի բերել Ղարաբաղի հայ բնակչությանը: Իր դաժանությամբ աննախադեպ մարդու իրավունքների ոտնահարումը ԼՂԻՄ-ում արդեն դարձել է սովորական երևույթ: Ադրբեջանական ամբոխի ձեռքով իրականացված զանգվածային հակահայկական ջարդերը և կոտորածները (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ), Լեռնային Ղարաբաղի, ողջ Հայաստանի մշտական շրջափակումը, արտակարգ դրությունը, խաղաղ բնակչության դեմ ուղղված պարբերական ռազմական գործողությունները, տեղահանումները, հալածանքները շարժման առաջամարտիկների և ժողովրդական պատգամավորների նկատմամբ, խստագույնս գրաքննությունը, զանգվածային ինֆորմացիայի կեղծարարությունը— այս ամենը օղակներ են կենտրոնական իշխանությունների գործողության շղթայում, որը կայսրության ռազմական հզորությունն ուղղել է իր բախտը տնօրինելու ձգտող հայ ժողովրդի դեմ:

ԼՂԻՄ-ի ներքին քաղաքական, տնտեսական,

[60] *Բանակայինների վայրագությունների մասին մանրամասը տես՝ Անդրեյ Մալգին, Ինչ է անում բանակը Լեռնային Ղարաբաղում, «Ստոլիցա», № 1, 1991։*

մշակութային, ժողովրդագրական խնդիրները լուծվում են բացառապես զենքի ուժով: 1989 թ. հունվարից վերացվել է մարզային խորհուրդը: Այժմ իշխանությունը խորհուրդներին փոխանցելու խոսակցություններին զուգահեռ կենտրոնը զորքն օգտագործում է ԼՂԻՄ-ի տեղական խորհուրդները ջախջախելու և մարզի ինքնավարությունը վերացնելու նպատակով:

***

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ պետական ծրագրված ահաբեկչական պատերազմը մղվում է **ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովի ցցենարով և Ադրբեջանի պրեզիդենտ Ա. Մութալիբովի բեմադրությամբ:** Նախ, միակողմանի զինաթափ են արվում արցախահայերին բահերից, քլունգներից և նրանց դեմ նետում Աֆղանստանից դուրս բերված ռազմական ողջ տեխնիկան: Մ. Գորբաչովի «վերակառուցված», ավելի ճիշտ՝ քանդված երկրում գրոհայիններ են բոլոր մեծ ու փոքր հայերը: Գրոհայիններ են անգամ նրանց կովերն ու ոչխարները, որոնք ամեն օր խորհրդային բանակի մարտիկների օգնությամբ քշում-տանում են ադրբեջանական շրջանները: Գրոհայիններ են հայերի ցորենի արտերը, այգիները, որոնք նենգորեն հրդեհում, կտրատում են ադրբեջանցիները, որպեսզի հայերին ծնկի բերեն նաև սովի ճիրաններում:

Արդեն չորս տարի իրականացվող այս պատերազմը հայկական Արցախին դրել է գերլարված

ու ահաբեկման վիճակում և գրեթե ամեն օր միանգամայն անմեղ մարդիկ, ամբողջ ընտանիքներ են զոհվում, գյուղեր ավերվում՝ հանուն Անդրեյ Սախարովի բառերով, «Գորբաչովի ադրբեջանամետ քաղաքականության» իրականացման: Այլապես չարագործությունները չափ ու սահման կունենան, հայկական Գետաշեն, Մարտունաշեն և Շահումյանի շրջանի գյուղերի դեմ չէին հանի այդքան ռազմական տեխնիկա:

Այս անմարդկային ու ավերիչ չարագործությունները, Ադրբեջանում տեղակայված 4-րդ բանակն իրականացնում է մութալիբովյան օմոնականների հետ ձեռք-ձեռքի տված, կոտորելով ու տեղահանելով անմեղ հայ գյուղացիներին իրենց հազարամյա բնակավայրերից: Ի պատիվ մեծ ու փոքր (սովերեն պետությունների՝ ԽՍՀՄ և Ադրբեջանի) պրեզիդենտների, ասենք, որ նրանց հաջողվել է ավերել, թալանել ու հայաթափ անել երեք տասնյակից ավելի հայկական գյուղեր, հիմնովին խարխլել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական կյանքը: Մի խոսքով, ռազմանակատի Ղարաբաղյան թատերաբեմում նրանք շոշափելի հաղթանակների են հասել:

Այսուհանդերձ, պատերազմը շարունակվում է, Արցախ-Ղարաբաղի բնիկները, տերերը՝ հայերը համառորեն պաշտպանում են իրենց արժանապատվությունն ու հայրենի երկրամասը:

***

Մենք արդեն անհերքելի փաստերով ցույց ենք

տվել, որ գաղափարաքաղաքական արկածախնդրությունն ավելի վտանգավոր է, քան մարդասպանությունը: Ազգամիջյան շիկացած կրակի վրա անընդհատ յուղ լցնելը սովորական ավազակությունից ոչնչով չի տարբերվում: Իրենց բորբոքած ազգամիջյան կրակը վառ պահելու համար Բաքվում շարունակվում են հակահայկական գրքերի տպագրությունը, ֆիլմերի նկարահանումը, կլոր սեղանի շուրջը ասուլիսների կազմակերպումը: Նման բնույթի միջոցառումներ են անցկացվում նաև Մոսկվայում՝ Ադրբեջանի ներկայացուցչությունում: Այս էլ որերորդ անգամ Ադրբեջանի լիազոր-ներկայացուցիչ Ռուստամ-Զադե Փաշա օղլին իր պրեզիդենտի՝ Ա. Մութալիբովի նման ստելով ճամարտակում[61] է, թե «Հայաստանում ոչ մի ադրբեջանցի չկա, իսկ Ադրբեջանում 200 հազար հայ կա»: Մինչդեռ, իրականում, **Հայաստանում կան և՛ ադրբեջանցիներ, և՛ ադրբեջանական գյուղ: Ինչ վերաբերում է 200 հազար հային, ապա նրանք ոչ թե «Ադրբեջանի հողում են», այլ իրենց սեփական հայկական հողում՝ Արցախի՝ պատմական Հայաստանի հողում:** Այս է ճշմարտությունը, որը, սակայն, համառորեն չեն ուզում ընդունել Ադրբեջանի ղեկավարները: Դեռ ավելին, հարևան հանրապետության լիազոր-ներկայացուցիչը հայտարարում է, որ Ղարաբաղյան շարժման՝ իր բառերով «ավանտյուրայի առաջին զոհերն ադրբեջանցիներն են եղել Ասկերանում, առաջին փախստականները՝ 18 հազար ադրբեջանցիները՝ Ստեփանակերտից»: Այստեղ լիազոր-ներկայացուցիչը բացահայտորեն կեղծում է փաստերը, չի ասում որ **1988 թ. փետրվարին Ստեփանակերտում անցկացվող խաղաղ համահավաքների մասնակիցներին «դասեր տալու համար» ադրբեջանական Աղդամ քաղաքից, մոտ 8 հազար բաշիբոզուկներ անցնում են հայկական մարզի սահմանը և իրենց առաջ հանդիպող ամեն ինչ հողին հավասարեցնելով՝ հասնում հայկական Ասկերան շրջկենտրոնը և ապա այստեղ հակահարված ստանալով՝ դիմում փախուստի: Առաջին երկու ադրբեջանցիների սպանությունը, ինչպես պարզել է դատաքննությունը, կատարվել է ադրբեջանցի միլիցիոներների կողմից:**

Մյուս ճշմարտությունն այն է, որ ԼՂԻՄ-ի ադրբեջանական ոչ մի բնակավայրից ադրբեջանցիները փախուստի չեն դիմել, Ստեփանակերտում 1988 թ. հունվարի 1-ի տվյալներով ապրում էր ընդամենը 4,5 հազար ադրբեջանցի (այլ ոչ թե 18 հազար, ինչպես փորձում է ներկայացնել լիազոր-ներկայացուցիչը), որի մի զգալի մասն այժմ էլ շարունակում է բնակվել Ստեփանակերտում՝ նրա Կրկժան թաղամասում, իսկ մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական բաժնի ուսանողներն իրենց դասախոսների հետ միասին, ինստիտուտի փակվելու կապակցությամբ վերադարձել են այնտեղ, որտեղից նրանք եկել էին,

[61] «Հայաստանի Հանրապետություն», *8 օգոստոսի 1991, № 168.*

այսինքն փոխադրվել են հանրապետության այլ բուհերը: Մնացած փոքր մասը՝ մոտ 100 ընտանիք, իրենց բնակարանները փոխանակել են նույն հայկական մարզի Շուշի քաղաքից վտարված հայերի հետ: Այս ամենից բացի, լիազոր-ներկայացուցիչը քաջ գիտե, որ վերջին երեք տարվա ընթացքում ԼՂԻՄ-ում ստեղծվել են մի շարք ադրբեջանական նոր բնակավայրեր, զգալի չափով ընդարձակվել, մարդաշատ դարձել հայկական մարզում վերջին քսան տարում ստեղծված ադրբեջանական գյուղերը, իսկ բոլորովին վերջերս հայաթափ եղած հայկական գյուղերից մի քանիսը արտոնյալ պայմաններով վերաբնակեցվել են ադրբեջանցիներով: Այս իրողությունները հասարակությունից թաքցնում են ադրբեջանցի գործիչները:

Բաքվում հաճախակի թմբկահարում են Հայաստանից գաղթած միայն իրենց փախստականների մասին և բնավ չեն էլ ուզում հիշել Ադրբեջանից դուրս մղված հայ գաղթականներին, որոնք քանակով 2,5 անգամ գերազանցում են ադրբեջանցի վտարանդիներին: Այս խորամանկ միտումնավորությունն արվում է նրա համար, որպեսզի զենքի ուժով Արցախի բնակավայրերի այժմյան հայաթափումը ներկայացվի որպես ադրբեջանական կողմի պատասխան քայլ: 150 հազար ադրբեջանցու դիմաց 1988—1990 թթ. Ադրբեջանից վտարված ավելի քան 365 հազար հայ, խաղաղ բնակչության բռնագաղթեցումն ընկրկվել է Սումգայիթի ջարդերով. ադրբեջանական կողմն այդ մասին մի բառ անգամ չի ասում: Բաքուն լռում է, ոչինչ չի գրում նաև այն մասին, որ Ադրբեջանից տեղահանված հայերն իրենց մոտ՝ Ադրբեջանում թողել են 103,7 հազար բնակարան, 132 բնակավայր, իսկ ադրբեջանցիները Հայաստանում՝ միայն 27.6 հազար բնակարան: Այն էլ ասենք, որ ադրբեջանցիները Հայաստանում հնարավորություն են ունեցել հանգիստ պայմաններում փոխանակել, ծախել իրենց ոչ միայն բնակարանները, այլև մյուս անշարժ ինչքը: Մինչդեռ, ամենքին հայտնի է, որ հայերի բռնագաղթը Ադրբեջանում ուղեկցվել է ջարդերով, ալանթալանով, որի հետևանքով գաղթական հայերի մեծ մասը չի կարողացել իր հետ վերցնել առաջին անհրաժեշտության իրերը: Մինչև այժմ էլ նրանք չեն կարողանում ստանալ իրենց բնակարանների և գույքի դիմաց հասանելիք հատուցումը:

Ի վերջո, մեկ այլ քաղաքական անբարոյականության մասին: Բաքվում (և ինչու միայն Բաքվում) վրդովմունքով են խոսում Արցախի հայերի դիմադրության մասին, բայց, ավաղ, լռում են ադրբեջանական օմօնականների վայրագությունների մասին, որոնք, ինչպես նշվել է, խորհրդային բանակի հետ դաշնակցած՝ ավազակային պատերազմ են մղում հայկական գյուղերում: Հայերի մեղքը, ասպատակիչների կարծիքով, կայանում է նրանում, որ նրանք չեն ուզում ենթարկ-

վել բռնագաղթի և համառորեն դիմադրում են: Սա էլ համարվում է հայերի հանցագործությունը կոմունիստական Ադրբեջանի հանդեպ: Երբ բռնագաղթվող հայկական գյուղերում երիտասարդները պաշտպանում են իրենց հարազատների կյանքը, նրանց համարում են բանդիտներ, գրոհայիններ, իսկ նրանք, ովքեր տանկերի, հրետանու, ռմբակոծիչների ուղեկցությամբ ավերում են հայկական գյուղերը, սպանում մարդկանց, թալանում հայերի ունեցվածքը, հորջորջվում են հերոսներ, գվարդիականներ, ինտերնացիոնալիստներ:

Արդեն վաղուց արժեզրկված կոչերը, կեղծ փաստարկները նպատակ են հետապնդում սպեկուլյատիվ աղմկարարությամբ արդարացնել, քողարկել Արցախում հայերի հանդեպ կիրառվող բիրտ, անմարդկային դաժան գործողությունները: Միաժամանակ թուրք խուժանին հրամցվում է Ադրբեջանի սուվերենության գաղափարը, որի դեմ իբր ոտնձգություն են անում հայերը և որ նրանց հոշոտումը վրիժառություն է՝ սրբազան պատերազմ: Մինչդեռ, գազանությունները, վայրագություններն ադրբեջանական մոլեռանդ բիոմասսային տանում, հասցնում են միջնադարյան հետամնացության ևս մեկ տևական ժամանակաշրջան:

Մարդու իրավունքների խախտումը լրիվ չի արտացոլում այն, ինչ կատարվում է Լեռնային Ղարաբաղում: Այստեղ, հայկական այս մարզում տեղի է ունենում աներեւակայելի պատերազմ մի ամբողջ ժողովրդի նկատմամբ, իրականացվում է մի ժողովրդի ծրագրված ոչնչացում, տեղի է ունենում հայկական հողերի, բնակավայրերի զավթում: Այսօր իրար են միացել և՛ կենտրոնի, և՛ Ադրբեջանի երկու հրեշավոր ուժերը՝ ընդդեմ Արցախի անպաշտպան ժողովրդի:

***

Հ. Գ. Օգոստոսյան պետական դավադրության պարտությունից հետո, որոշակի նախադրյալներ են ստեղծվել և, կասկած չկա, որ երկրում լուրջ բարեփոխություններ կկատարվեն: Նոր փոփոխությունների են սպասում նաև արցախահայերը: Նրանք իրենց ծռված ճակատագիրը շտկելու համար մեծ հույսեր են կապում Բ. Ելցինի և ասպարեզ ելնող նոր մարդկանց հետ: Ուզում ես հավատալ, որ արտակարգ դրության երեք օր վերապրած **ռուսները**, հատկապես **մոսկվացիները** խոր ըմբռնումով կհասկանան ղարաբաղցիներին, որոնք **հատուկ**, իսկ ապա նաև **արտակարգ** դրության պայմաններում են ապրում արդեն ամբողջ երեք տարի:

Հ Ա վ Ե լ վ Ա Ծ

Արցախյան ազատագրական պայքարի պոռթկման ժամանակագրությունը. փետրվար 1988 թ.:

1986—87 թվականներին Արցախի հայ ազգաբնակչությունն ամենուրեք ստորագրություններ էր հավաքում ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու համար և պատվիրակություններ էր ուղարկում Մոսկվա: Առաջին պատվիրակություններից մեկին 1987 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունում է ԽՄԿԿ Կենտկոմի ընդունարանի վարիչ ընկ. Կրինինը: Արցախյան երկրորդ պատվիրակությունը Մոսկվայում էր գտնվում 1988 թվականի հունվարի 5—12-ը: Այդ պատվիրակությանն ընդունել են ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը և ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների ենթաբաժնի վարիչ Վ. Միխայլովը:

1988 թվականի փետրվարի 9—17-ը Մոսկվայում էր գտնվում ԼՂԻՄ-ից երրորդ պատվիրակությունը, որոնց փետրվարի 11-ին ընդունել է Վ. Միխայլովը:

1988 թվականի հունվար-փետրվար ամիսներին մարզի բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, կոլտնտեսություններում և պետտնտեսություններում տեղի էին ունենում կոլեկտիվների,

սկզբնական կուսկազմակերպությունների ընդհանուր ժողովներ, ժողովրդական պատգամավորների գյուղական, ավանային, շրջանային և քաղաքային խորհուրդների նստաշրջաններ, որոնցում աշխատավորների պահանջով քննարկվում է ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Բոլոր կազմակերպություններում միաձայն որոշվում է հարցը դրականորեն լուծելու խնդրանքով վերադաս մարմիններին դիմել: Նման որոշումը պաշտպանում են կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի, ինչպես նաև Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի և Մարտունու շրջկոմների բյուրոներն ու պլենումները:

Երկրի կենտրոնական մարմինների հասցեներով մարզից բազմաթիվ հեռագրեր և նամակներ են առաքվում, որոնցում առանձին անհատներ և ամբողջ աշխատանքային կոլեկտիվներ խնդրում են քննարկել արցախյան պրոբլեմը:

1988 թվականի փետրվարի 11-ին կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Բ. Ս. Կեվորկովը ժողովում է կուսակցության մարզկոմի պատասխանատու աշխատողներին և նրանց տեղեկացնում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի այն հաղորդագրությանը, ըստ որի ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը չի քննարկվում և չի քննարկվելու ԽՄԿԿ Կենտկոմում, իսկ մարզի աշխատավորների ներկայացուցիչներից կազմված պատվիրակություններին ԽՄԿԿ Կենտկոմում չեն ընդունել և չեն ընդունելու:

1988 թվականի փետրվարի 11-ին Ստեփանակերտ է ժամանում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Կոնովալովը, որպեսզի կանխի ինքնավար մարզը Հայաստանի հետ վերամիավորելու շարժումը: Նրան ուղեկցում էին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Ասադովը և Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահի տեղակալ Ն. Իմրանովը:

Կուսմարզկոմի բյուրոյում Վ. Կոնովալովը հայտարարել է, որ 1988 թվականի փետրվարի 12-ին նախատեսվում է մարզի բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում անցկացնել կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներ, որտեղ պիտի դատապարտվի շարժումը: Ինչպես և նախատեսված էր, 1988 թվականի փետրվարի 12-ին Ստեփանակերտում, Մարտակերտում, Հադրութում և Ասկերանում կայացան կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներ, սակայն, հակառակ Ադրբեջանի ղեկավարության ցանկության, պաշտպանվեց հայ ազգաբնակչության ձրգտումը՝ մարզը մայր Հայաստանի հետ վերամիավորելու մասին: Այդ ժողովներում որոշում է ընդունվում ինքնավար մարզը Հայաստանի հետ վերամիավորելու մասին:

Մարզի բոլոր քաղաքներում և շրջկենտրոններում տարերային կերպով ծնվում են աշխատավորների միտինգներ և ցույցեր: Այդ նույն օրը Ստեփանակերտ՝ Կոնովալովին օգնության են գալիս Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Թ. Օրուջևը և Ռ. Մեհթիևը:

1988 թվականի փետրվարի 13-ին, ժամը 11-ին Ստեփանակերտի Լենինի հրապարակում՝ կուսմարզկոմի շենքի առաջ, կայացավ քաղաքի աշխատավորների միտինգը, որը տևեց 1 ժամ 37 րոպե: Միտինգի մասնակիցները հանդես եկան ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով, վանկարկեցին լոզունգներ, ի աջակցություն վերակառուցման, հրապարակայնության, ժողովուրդների բարեկամության, Մ. Ս. Գորբաչովի և լենինյան ազգային քաղաքականության:

Նույն օրը՝ փետրվարի 13-ին, Ստեփանակերտ հասավ ներքին զորքերի մի դիվիզիա՝ գեներալ-մայորներ Գրիգորևի և Սաֆոնովի հրամանատարությամբ:

Փետրվարի 15-ին Ստեփանակերտում և շրջկենտրոններում կրկին միտինգներ և ցույցեր են անցկացվում, որոնցում պահանջվում է հրավիրել ժողովրդական պատգամավորների խորհուրդների նստաշրջաններ: Այդ նույն օրը անց են կացվում Ստեփանակերտի քաղխորհրդի և Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու շրջխորհուրդների նստաշրջանները, ընդունվում են որոշումներ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին:

Ադրբեջանի ղեկավարությունը Ստեփանակերտ և մարզի շրջաններ միլիցիայի լրացուցիչ ուժեր է մտցնում մարզին հարակից ադրբեջանական շրջ-

ջաններից, ինչն էլ տեղիք է տալիս մարզի աշխատավորների բողոքին:

Մինչև փետրվարի 16-ը ցույցերն ու միտինգներն անցկացվում էին աշխատանքային օրերին, իսկ փետրվարի 16-ից մինչև մարտի 2-ը ժողովուրդը Լենինի հրապարակում օր ու գիշեր հավաքված էր: Մարդիկ պահանջում էին հրավիրել ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջան և քննարկել մարզը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը:

Փետրվարի 18-ին Ստեփանակերտում կայացավ բազմահազարանոց միտինգ:

Փետրվարի 19-ին հրապարակվեց Ազերինֆորմի հաղորդագրությունն այն մասին, որ ԽՄԿԿ Կենտկոմը տերիտորիալ ոչ մի հարց չի քննարկել և չի էլ քննարկելու:

Փետրվարի 20-ին Ստեփանակերտ է ժամանում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը: Նրան ուղեկցում էին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի մի քանի անդամներ և ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Վ. Ցաշինը:

Այդ նույն օրը մարզի աշխատավորները, բողոքելով մարզային խորհրդի նստաշրջան հրավիրելու մերժման դեմ, գործադուլ են հայտարարում:

Ք. Բաղիրովի նախագահությամբ կայանում է կուսմարզկոմի բյուրոյի նիստը, որտեղ հանրապետության ղեկավարը համառորեն պնդում էր

ընդունել կուսմարզկոմի բյուրոյի որոշման նախագիծը, որը նախօրոք պատրաստել էր հանրապետության ղեկավարությունը և որտեղ մարզում ստեղծված իրավիճակի համար ամբողջ պատասխանատվությունը դրվում էր մարզային կուսակցական կազմակերպության վրա: Նրանում քննադատական բառ անգամ չկար Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետական մարմինների հասցեին: Բնականաբար, մարզկոմի բյուրոյի կազմը չի համաձայնվում, և նախագիծը չի ընդունվում:

Մարզի աշխատավորները հավաքվում են Լենինի հրապարակում և նրա մերձակա փողոցներում (մոտավոր հաշվումներով, նրանց թիվն անցնում էր 70 հազարից): Ժողովուրդը պահանջում էր մարզային խորհրդի նստաշրջան հրավիրել: Ժամը 16-ին նշանակված նստաշրջանն իր աշխատանքն սկսում է ժամը 20-ին: 149 ժողովրդական պատգամավորներից նստաշրջանին մասնակցում էին 110-ը: Հանրապետության ղեկավարությունը մարզգործկոմի նախագահ Վ. Օսիպովի հետ ամեն կերպ ձգտում է խոչընդոտել նստաշրջանի անցկացմանը: Այդ նպատակով Ք. Բաղիրովը կուսմարզկոմ է հրավիրում կուսակցության շրջանային (քաղաքային) կոմիտեների առաջին քարտուղարներին և շրջանային (քաղաքային) գործկոմների նախագահներին, նրանց հանձնարարվում է իր մոտ կանչել կոմունիստ պատգամավորներին: Սակայն դա չի հաջողվում:

Այդ անհաջողությունից հետո Բաղիրովն իր շքախմբի և մարզկոմի քարտուղարի հետ ճարահատ գալիս է մարզային խորհրդի նիստերի դահլիճ և բոլոր միջոցներն օգտագործում պատգամավորների վրա ներգործելու համար: Սակայն նրա ջանքերն ապարդյուն են անցնում: Պատգամավորներն սկսում են մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի աշխատանքը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում է ընդունում ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին խընդրում քննարկել այդ հարցը:

1988 թվականի փետրվարի 21-ին հրապարակվում է «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը, որում արցախահայերն անվանարկվում են «ազգայնամոլներ և ծայրահեղականներ»:

Ստեփանակերտում օրվա երկրորդ կեսին Լենինի հրապարակում տեղ է ունենում աշխատավորության միտինգ: Տագնապալից լուրեր են ստացվում այն մասին, որ մարզին հարակից ադրբեջանական շրջաններում տեղի են ունենում հայերի հալածանքներ ու ջարդեր, հարձակումներ են կատարվում հայերին պատկանող փոխադրամիջոցների վրա:

Այդ նույն օրը Ք. Բաղիրովը անց է կացնում կուսակցության մարզկոմի բյուրոյի նիստ, որտեղ քննարկվում է «1988 թվականի փետրվարի 21-ին

ԽՄԿԿ Կենտկոմի «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշման կատարման առաջնահերթ խնդիրների մասին» հարցը: Այդ բյուրոյից հանրապետության ղեկավարը կուսմարզկոմի բյուրոյի անդամներին մարզի շրջաններն է ուղարկում, որպեսզի նրանք շրջկոմների պլենումներ անցկացնեն ու հավանություն տան ԽՄԿԿ Կենտկոմի որոշմանը, սակայն կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի և շրջկոմների (բացի Շուշիի շրջկոմի) պլենումները չեն համաձայնվում արցախյան շարժման՝ ԽՄԿԿ Կենտկոմի գնահատականին և պահանջում են ինքնավար մարզը վերամիավորել Հայաստանի հետ:

Փետրվարի 22-ին Բաղիրովին և նրա թիմին օգնության են հասնում ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածուներ, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը:

Մոսկվայից ժամանած ընկերների մասնակցությամբ անց է կացվում մարզի կուսակցական-տնտեսական ակտիվի ժողով, որին չեն մասնակցել Ասկերանի և Մարտակերտի շրջանների ներկայացուցիչները, քանի որ խանգարված էր տրանսպորտային հաղորդակցությունը՝ Ասկերան ավանի վրա հարձակվել էին հարևան Աղդամի շրջանի ադրբեջանցի գրոհայիները: ԽՄԿԿ քարտուղար Գ. Ռազումովսկին ակտիվին ծանոթացրեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձու-

թյունների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի 1988 թվականի փետրվարի 21-ի որոշման հետ: Բոլոր ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ արցախյան շարժման մասին ԽՄԿԿ Կենտկոմի գնահատականներն օբյեկտիվ չեն և պահանջեցին խորապես ուսումնասիրել պրոբլեմը ու լուծել այն:

Այդ նույն օրը՝ փետրվարի 22-ին, Աղդամի շրջանի մի խումբ ադրբեջանցի գրոհայիններ ու ծայրահեղականներ, իրենց շուրջը հավաքելով մոտ ութ հազար մարդ, մի արշավ են կազմակերպում դեպի Ասկերանի շրջան, ինչի հետևանքով էլ շրջկենտրոնի մոտ ընդհարում տեղի ունեցավ՝ երկու կողմից էլ եղան տուժածներ, զգալի վնաս հասցվեց Ասկերանի շրջանի ժողովրդական տնտեսության օբյեկտներին: Ադրբեջանցի գրոհայինների հարձակմանը դիմակայեց տեղական կայազորը՝ այդ պահին Ստեփանակերտում գտնվող բանակի գեներալ Զայցևի հրամանով:

Ստեփանակերտում և շրջկենտրոններում շարունակվում են աշխատավորների բազմահազարանոց ցույցերն ու միտինգները: Հադրութի շրջանը շրջափակվել էր Ֆիզուլիի, Զաբրայիլի և Կուբաթլուի շրջանների միլիցիայի պահակակետերով, որոնք խոչընդոտում էին տրանսպորտային հաղորդակցությանը:

Փետրվարի 23-ին կայանում է կուսակցության ԼՂ մարզկոմի պլենումը, որն աշխատանքում տեղ գտած թերությունների համար Բ. Ս. Կնորկովին ազատում է մարզկոմի առաջին քարտուղարի

պաշտոնից: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար է ընտրվում Հենրիխ Պողոսյանը:

Այդ նույն օրը Ստեփանակերտի Լենինի հրապարակում կայանում է հարյուր հազարանոց միտինգ, որին փաստորեն մասնակցում էր մարզի ամբողջ չափահաս բնակչությունը: Պլենումի արդյունքների մասին միտինգի մասնակիցներին տեղեկացնում է մարզկոմին առընթեր կուսակցական վերահսկողության հանձնաժողովի նախագահ Վ. Հարությունյանը:

Միտինգում ցանկացավ ելույթ ունենալ Բաղիրովը, բայց ժողովուրդը չթողեց նրան խոսել: Կեսօրին, ցուցարարների պահանջով, ժողովրդի առաջ հանդես եկան Պ. Դեմիչևն ու Գ. Ռազումովսկին, թեև Բաղիրովն ու նրա թիմն ամեն կերպ փորձում էին խանգարել դրան: Դեմիչևն ու Ռազումովսկին հանդես են գալիս 10 րոպեանոց ելույթով: Մարզում իրենց գտնվելու օրերին,— հայտարարեցին նրանք,— շատ բան են տեսել ու հասկացել, ինչի մասին էլ անպայման կտեղեկացնեն երկրի ղեկավարությանը:

Փետրվարի 24-ին գործադուլն ու միտինգները շարունակվում են, ժողովուրդը գիշեր ու զոր կանգնած էր Ստեփանակերտի Լենինի հրապարակում, որտեղ տրվում է տաք սնունդ, հերթապահում էր շտապ օգնության մեքենան:

Փետրվարի 25-ին մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանը հավաքեց մարզկոմի բյուրոյի անդամներին և հայտնեց նրանց, որ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը զանգել է իրեն և հետաքրքրվել մարզում ստեղծված իրավիճակով: Այդ նույն օրը «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերում հրապարակվում են հոդվածներ, որոնցում ոչ օբյեկտիվ ինֆորմացիա է տրվում արցախյան իրադարձությունների մասին, ինչն էլ առաջ է բերում մարդկանց զայրույթը:

1989 թվականի փետրվարի 26-ին, ժամը 12-ին Ադրբեջանի հեռուստատեսությամբ հանդես է գալիս ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին և կարդում Մ. Ս. Գորբաչովի դիմումը Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին ու աշխատավորներին:

Փետրվարի 27-ին կայանում է կուսմարզկոմի բյուրոյի նիստը, որտեղ քննարկվում է «Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին ու աշխատավորներին հղված ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի դիմումից բխող խնդիրների իրականացման առաջնահերթ միջոցառումների մասին» հարցը:

Փետրվարի 27—29-ը Սումգայիթում կազմակերպվեց հայերի եղեռն: Ըստ պաշտոնական տվյալների՝ սպանվել է 26, վիրավորվել 400 հայ,

թալանվել է 200 բնակարան: Երկրի ղեկավարությունը միայն երրորդ օրն է զորքեր մտցնում Սումգայիթ և դադարեցնում հետագա արյունահեղությունը:

Սումգայիթյան դեպքերը թաքուն են պահում ժողովրդից: Միայն փետրվարի 29-ին՝ ջարդերի երրորդ օրը, հանրապետական ռադիոյով և հեռուստատեսությամբ ելույթ է ունենում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը և հայտնում Սումգայիթում ու Կիրովաբադում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների մասին, ասում, որ եղել են հայերի նկատմամբ բռնության, թալանի, դիակապտության դեպքեր, և ադրբեջանական ժողովրդին կոչ է անում հանգստության:

Փետրվարի 27-ին Ստեփանակերտ է ժամանում ԽՄԿԿ Կենտկոմի բրիգադը, որի կազմում էին ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչի տեղակալ Կ. Բրուտենցը, «Նորություններ» մամուլի գործակալության նախագահի տեղակալ Կ. Խաչատուրովը և ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրենի տեղակալ Մ. Մչեդլովը:

Փետրվարի 29-ին կրկին Ստեփանակերտ է ժամանում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը, որը Լենինի հրապարակում հավաքված

մոտ հարյուր հազար աշխատավորներին հայտնում է, որ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն վերստին անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հարցին և ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությանը հանձնարարել է մանրազնին ուսումնասիրել հարցը ու պատրաստ լինելու դեպքում այն ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության քննարկմանը: Այդ հաղորդումից հետո Պ. Դեմիչևը մեկնեց Բաքու: Նրա հետ մեկնեց նաև Կ. Բրուտենցի խումբը:

Պայքարը շարունակվում է:

«Խորհրդային Ղարաբաղ», 20 փետրվարի 1991 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրական տեղեկություններ 3
Պատմամշակութային համառոտ ակնարկ . . 7
Հանցագործությունների շղթա 53
Հավելված 90



Գանձասար. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (VIII դ.):

Գանձասար. Եղեկեցու Թմբուկի քանդակներից (XIII դ.)։

Գանձասար. Եկեղեցու բարձրաքանդակներից (XIII դ.)։



Դաղիվանք. *խաչքարի մանրամաս (XIII դ.)։*

Գետաշեն *Մահարձան (XVII դ.)։*

Խաչեն. *Խաչքարի մանրամաս (XII դ.)։*

Ջրվեր. *խաչքարեր (1187 թ.)։*





Մեծ Ղարամուրատ. **Խամշիվանքի** *զանգակատունը (XIII դ.)։*

Գոսնաասար. եկեղեցու թմբուկից մանրամասն (XIII դ.)։

Վարազդուավանք (IX—X դդ.)։

Խրիմյան. Ամենափրկիչ եկեղեցին (1656 թ.)։

Մկրտչյան Շահեն Մակիչի

Ա Ր Ց Ա Խ

«Դիզակ» հայրենակցական միություն

Мкртчян Шаген Макичович

А Р Ц А Х

(на армянском языке)

Ереван, 1991 г.

Խմբագիր՝ Ա. Ղահիրյան:
Նկարիչ՝ Ա. Բաղդասարյան:
Տեխ. խմբագիր՝ Շ. Մկրտչյան:

Հանձնված է շարվածքի՝ 8.08.1991 թ.: Ստորագրված է տպագրության՝ 2.09.91 թ.: Չափը՝ 70×90¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 1: 7 պայմ. տպ. մամ., 4,43 հրատ. մամ.: Պատվեր՝ 778: Տպաքանակը՝ 25.000: Գինը՝ 10 ռուբլի:

ՀՀ Նախարարների խորհրդի «պարբերական» հրատարակչություն, Երևան—23, Օրջոնիկիձեի պող. №2: